

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊՈՂՈՍՅԱՆ ԹՈՎՄԱՍ ԳԵՎՈՐԳԻ

ՋԻՎԱՆՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ժ.01.01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների դոկտորի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
ՍԱՐԳԻՍ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՎԱԿԻՄԻՐ ԱՂԱՍՈՒ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԶԱՎԵՆ ՎԱՍԻԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի Խ. Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2016թ. դեկտեմբերի 23-ին, ժամը 12:30-ին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի, 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. նոյեմբերի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու՝ *Ս. Վարդանյան* Ս.Ա. Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ավելի քան վեցդարյա պատմություն ունեցող հայ աշուղական երգարվեստը անցել է երկու փուլ: Առաջին փուլը, որը կարելի է պայմանականորեն անվանել ավանդական կամ ընդհանուր արևելյան՝ 15-րդ դ.՝ սկզբնավորումից մինչև 19-րդ դ. կեսերը և բուն հայկական ազգային փուլ՝ 19-րդ դ. երկրորդ կեսից մինչ այժմ: Երկրորդ փուլը, հիրավի, սկզբնավորվում է մեծանուն աշուղ Ջիվանիով:

17 - 18-րդ դդ. և ապա 19-րդ դ., ըստ աշուղագետ Գ. Լևոնյանի, բուն հայկական միջավայրում ձևավորվել, զարգացել և կենցաղավարել են երեք աշուղական դպրոցներ.

1. Նոր Ջուղայի՝ պարսկա-հայկական, 17-րդ դ. պարսկահայ բարբառով,
2. թուրք-հայկական, 18-րդ դ., թուրքերեն և հայերեն,
3. վրացա-հայկական, 18-րդ դ., Թիֆլիսի բարբառով:

Թվարկած դպրոցներին պատկանող աշուղների ստեղծագործական սկզբունքները եղել են միևնույնը՝ ընդհանուր արևելյան: Տարբերությունը վերաբերում է աշխարհագրական, հասարակական, քաղաքական ու էթնիկական միջավայրի ու աշուղի փոխհարաբերություններին:

Տվյալ աշխատության խնդրից դուրս է հայ աշուղական երգարվեստի նախաջիվանյան և Ջիվանու ու նրան հաջորդող՝ նրա հիմնադրած դպրոցի երաժշտա-մեղեդային ակունքների քննությունը: Մեր խնդիրն է աշուղի ստեղծագործությունների, այդ թվում՝ անհայտ ու անտիպ երգերի, որոնք նրա գրական ժառանգության կարևոր մասն են կազմում, բանասիրական քննությունն ու բնութագրումը: Ուսումնասիրելով Ջիվանու երգերի երաժշտությունը, վերլուծելով նրա մոտեցումները՝ ակնհայտորեն պարզ է դառնում, որ նա հիմնվել է հայկական ժողովրդական և հոգևոր երաժշտության հզոր հիմքերի վրա, որով շատ կարևոր մի քայլ արվեց հայ աշուղական երգարվեստի պատմության մեջ. վերջնականապես և բացարձակապես ազգայնացվեց հայ աշուղական մելոսը, հաստատվեց ազգային լինելու իրողությունը:

Հայտնի է, որ աշուղական երգերն ստեղծվում էին արևելյան լադերով և արևելյան մտածողությամբ: Բայց քանի որ երգերը հայերենով էին երգվում, ուստի այդ երգերում առկա էր հայկականությունը, թեև դրանք խառն էին և զուգահեռաբար զարգացող: Ջիվանին դրանք վերջնականապես ազգայնացրեց: Մի հանգամանք, որ հիմք է տալիս Ջիվանուն համարելու հայ աշուղական արվեստի Կոմիտաս:

Աշուղական երգարվեստը ծնունդ է առել մի միջավայրում, որը հազեցված էր հայ ժողովրդական երգ-երաժշտությամբ ու հայ հոգևոր-եկեղեցական երգի հարուստ ավանդական ստեղծագործություններով: Ուստի մեր ատենախոսության մեջ շարունակ փորձել ենք ցույց տալ Ջիվանու կապը իր նախորդների և հայ աշուղական դպրոցի, ինչպես նաև ժողովրդական

ավանդական թեմաների հետ, որոնք ազգային մի նոր իմաստավորմամբ ու մշակմամբ ներկայացրեց Ջիվանին՝ նոր սկիզբ դառնալով հայ աշուղական բանաստեղծության մեջ, արձագանքելով և հայության ժամանակի հուզող խնդիրներին:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ փորձ է արվում Ջիվանու ստեղծագործությունը դիտարկել աշուղական և նոր շրջանի հայ դասական բանաստեղծության ընդհանուր համատեքստում և համեմատել իր նախորդների ու հաջորդների, այդ թվում և Թումանյանի, Իսահակյանի ու Չարենցի հետ:

Ցույց են տրվում թեմատիկ այն մոտիվները, որոնք կայուն ձևով հեղինակից հեղինակ են փոխանցվում հայ բանաստեղծության մեջ և հուզում են ունկնդրի և ընթերցողի սրտերը: Այս տեսանկյունից արդիական կարևորություն ունի Ջիվանու օրինակով աշուղական արվեստի և կատարողական վարպետության տարբեր ձևերը վերհանելը, աշուղական դպրոցի արտահայտչամիջոցները ներկայացնելը, որոնք Ջիվանիով սկզբնավորված մի նոր ուղղությամբ ունեցան իրենց շարունակությունը և եկան - հասան մերօրյա ժողովրդական կատարողներին:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Սկսած 19-րդ դարի երկրորդ կեսից՝ մեծ աշխատանք է կատարվել աշուղական բանաստեղծության ուսումնասիրման և քննադրերի հրատարակության գործում: Այս համատեքստում պատշաճ տեղ է հատկացվել Ջիվանուն: Վերջինիս ստեղծագործությունն իր ամբողջության մեջ ուսումնասիրելու, նրա երգերում առկա թեմատիկ մոտիվները վեր հանելու, աշուղական բանաստեղծությանը բնորոշ արտահայտչամիջոցները, տաղաչափությունն ու բանաստեղծական ձևերը քննելու համար հարկավոր էր հրատարակել նրա մեզ հասած և պահպանված ստեղծագործությունները: Ահա այս պատճառով նախ առանձին հատորով հրատարակել ենք Ջիվանու անհայտ գործերը և, վերջիններիս ու տպագիր ժողովածուների հիման վրա, սկզբից առանձին գրքով և ապա ներկայացվող ատենախոսությամբ կատարել աշուղի ստեղծագործությունների համակողմանի քննությունը՝ անդրադառնալով և նրա գործերի գրության, և ապրած ժամանակաշրջանի հարաբերակցության հարցին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՊՋՔՈՒՆՔՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է եղել ներկայացնել Ջիվանու բանաստեղծական ժառանգությունը: Ջիվանին մի նոր սկիզբ դարձավ հայ աշուղական բանաստեղծության մեջ՝ արդեն որոշակիորեն համահունչ 19-րդ դարակեսին սկզբնավորվող հայ դասական բանաստեղծությանը, ուստի մենք նպատակ ենք դրել ցույց տալ:

ա. Որքանով է Ջիվանին կապված նախորդ շրջանի աշուղների և ընդհանուր արևելյան բանաստեղծության հետ:

բ. Քննել, թե Ջիվանին աշուղական երգը որքանով հունավորեց դեպ հայ դասական բանաստեղծությունը, և որքանով է նրա ստեղծագործությունը համահունչ ու ստուգաբանվում բանաստեղծական այս ընթացքի մեջ:

Մեր աշխատանքի գլխավոր խնդիրն է եղել վեր հանել Ջիվանու ստեղծագործությունների թեմատիկ ողջ բազմազանությունը և ընդգրկունությունը: Այս խնդիրը և Ջիվանու երգերի առանձնահատկությունը պայմանավորել են աշխատանքի համապատասխան մեթոդաբանությունը:

Ջիվանին բանաստեղծական շարքեր չունի, ինչպես նաև ժամանակի գրական ուղղություններին չի հարել, նրա յուրաքանչյուր գործը ծնվել է որպես աշուղական երգ և չափածո: Ջիվանին նաև աշխարհայացքային և գրական վարպետության նկատելի փոփոխություններ չի կրել, ուստի արդյունավետ չէ նրա գործերը ներկայացնել ըստ գրության ժամանակի ընթացքի, կամ փուլերի բաժանել ժամանակային պարբերացմամբ: Ուստի նրա գործերի քննության միակ եղանակը մնում էր դրանք խմբավորել և ներկայացնել ըստ թեմատիկ բաժանման, որն էլ կատարել ենք մեր աշխատանքում՝ ատենախոսության գլխաբաժանումը և յուրաքանչյուր գլխի ներքին բաժանումը պայմանավորելով նրա արծարծած թեմաների համապատասխան խմբավորմամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնում: Ատենախոսության կարևորագույն գաղափարներն ու հիմնադրույթները քննարկվել և ներկայացվել են մի շարք գիտաժողովներում և տեղ գտել հեղինակի՝ այս թեմայով տպագրած երկու գրքերում և տասնհինգ հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնադրույթներն ու եզրակացությունները կարող են օգտագործվել աշուղական գրականությանը և 19-րդ դարավերջի ու 20-րդ դարասկզբի հայ բանաստեղծության պատմությանը, ինչպես նաև Ջիվանու և, ընդհանրապես, հայ աշուղական բանաստեղծության բնագրերին նվիրված ուսումնասիրություններում:

Աշխատանքի թեմատիկ բաժանումը և առկա հարցերի քննությունը նույն համաբանությամբ կարող են կիրառվել նաև աշուղական գրականության մյուս ներկայացուցիչների ստեղծագործությունների վերլուծության համար:

Ջիվանու գրական ժառանգությունը աշուղա-ժողովրդական ստեղծագործությունների լայն համապատկերում քննող այս աշխատանքը կարող է օգտակար լինել գրական և երաժշտական արվեստի ու ժողովրդական բանահյուսության, և վերջինիս գրական մշակումների ուսումնասիրությամբ զբաղվող տարբեր մասնագետների, հետազոտողների և ուսանողների համար:

Նույն այս նպատակով ատենախոսության տարբեր բաժինները և ուսումնասիրության բնագրային հիմքը հանդիսացող Ջիվանու ստեղծագործությունները հեղինակը տպագրել է առանձին գրքերով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, յոթ գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և աղյուսակ-հավելվածից: Վերջինիս սյունակներում համապատասխան բաշխվածությամբ ներկայացվում են Ջիվանու մեզ հասած 1194 ստեղծագործությունները ըստ սկզբնատողերի այբբենական կարգի և նշվում է, թե նրանցից յուրաքանչյուրը ինչ ձեռագիր և տպագիր աղբյուրներով է մեզ հասել և քանի անգամ ընդօրինակվել ու տպագրվել:

ԳՐՈՒԽ ԱՌԱՋԻՆ ՋԻՎԱՆՈՒ ԱԶԳԱՅԻՆ -ԱՇՈՒՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ջիվանու ստեղծագործության կենսագրական ակունքները

Հայ աշուղական երգարվեստի ազգային դպրոցի հիմնադիր, մեծանուն Ջիվանին՝ Սերովբե Ստեփանի Բենկոյանը (Լևոնյանը), ծնվել է 1846 թ. Ջավախքի Կարծախ գյուղում, ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Բասենից գաղթած Բենկոյենց Գասպարի նահապետական ընտանիքում:

Ապագա մեծ աշուղը գրեկ-կարդալ է սովորում գյուղական ուսուցչի մոտ: Ուսման, երգի ու երաժշտության հանդեպ սերը նրա մեջ արթնանում է շատ վաղ: Նա հետաքրքրությամբ, ուշադրությամբ է լսում Կարծախ այցելած շրջիկ աշուղների երգն ու զրույցը: Նրա հոգում հետզհետե ամրապնդվում է աշուղ դառնալու ցանկությունն ու երազանքը և ինքն էլ սկսում է երգեր հորինել: Համազյուղացի աշուղ Սիային, որին սև լինելու պատճառով կոչում էին Ղարա-Ղազար, նկատում է պատանու հակումներն ու սերը, համաձայնվում է վերցնել իրեն աշակերտ:

Ջիվանին Սիայուն աշակերտում է հինգ տարի: Սովորում է ու հմտանում աշուղական երգարվեստի մեջ: Նրա բնատուր շնորհքն ու գեղեցիկ ձայնը նպաստում են, որ նա շուտով սովորում է սազ նվագել, տիրապետում է աշուղական արվեստի նրբություններին ու յուրահատկություններին, հորինում է՝ երբեմն էլ գերազանցելով նաև իր վարպետին: Ընդունված կարգի համաձայն աշուղ Սիային նրան հինգ տարի անց շնորհում է աշուղի կոչում և աշուղի անուն՝ Ջիվանի: Աշխատանքի բերումով 1864 թ. Ջիվանին հորեղբոր հետ գնում է Թիֆլիս, ապա Ալեքսանդրապոլ:

¹ Ըստ Գ. Լևոնյանի՝ ապագա աշուղին Ջիվանիկ է կոչել հայրը (տե՛ս Ա. Սահակյան, Հայրենաշունչ քնար, Երևան, 1985, էջ 13): Ջիվանին ապագայում իր ստեղծագործություններում հանդես է եկել նաև Սրապ (Սերովբե), Վարոս անուններով,

Ջիվանին ծանոթանում է Կարծախ այցելած նորբայազետցի աշուղ Սազայու հետ, որի համատեղ աշխատելու առաջարկը նա ընդունում է ²: Եվ երկու երիտասարդ աշուղները սկսում են միասին հանդես գալ: Նախ և առաջ նրանք հանգրվանում են Թիֆլիսում, ելույթներ ունենում վանեցի Կարապետ Սոնակյանցի սրճարանում՝ կարճ ժամանակում անուն ու հռչակ ձեռք բերելով:

Թիֆլիսում Ջիվանին մնում է մեկ տարի: Արդեն անուն հանած աշուղին Տալոյան եղբայրները հրավիրում են Ալեքսանդրապոլի իրենց սրճարանում երգելու: 1868 թ., հավանաբար Սազայու հետ, նա տեղափոխվում է ու հաստատվում Ալեքսանդրապոլում: 1871 թ. արդեն սեփական խումբ ուներ և մշտապես ելույթներ էր ունենում Տալոյան եղբայրների սրճարանում³:

1872 թ. Ջիվանին ամուսնանում է սրճարանատիրոջ՝ Հովհաննես Տալոյանի դստեր՝ Աշխենի հետ: Նրանք ունենում են վեց զավակ, այդ թվում՝ հրատարակիչ-խմբագիր, աշուղազետ, մատենագետ, արվեստի վաստակավոր գործիչ Գարեգին Լևոնյանը (1872 1947) և քաղաքական, հասարակական, ազգային գործիչ Պարույր Լևոնյանը (1884 1933):

Իր ստեղծագործական կարողություններով, իր երգերի բազմաթեմայնությամբ ու մայրենի լեզվի կիրառությամբ արհեստակից աշուղների միջավայրում նա մեծ հեղինակություն է ձեռք բերում: շուտով նրան ընտրում են իր իսկ ստեղծած արհեստակից աշուղների ընկերության (համքարության) կազմակերպության նախագահ՝ վարպետաց վարպետ Ջիվանու քանիցս արհեստավորաց գլուխ ընտրվելու փաստը վկայում է նրա բարձր հեղինակության մասին: Նշանակում է անվանի աշուղներով հարուստ Ալեքսանդրապոլը ընդունում և ճանաչում է Ջիվանու տաղանդը: Արձանագրության ռուսերեն օրինակի ներքո ստորագրում են 25 աշուղ, որոնց անունները հայտնի են⁴:

Ջիվանին հայ ժողովրդի ազատագրական պայքարին մասնակից է եղել ոչ միայն իր քնարով: Վավերագրերը վկայում են, որ նա բարեկամական, ընկերական կապեր է ունեցել Ալեքսանդրապոլում կազմակերպված «Բարենպաստակ» հայրենասիրական ընկերության անդամների հետ⁵:

Ջիվանու երգերը տպագրվել են նրա ստեղծագործական կյանքի արշալույսից առ այսօր պարբերական մամուլի էջերում, առանձին ժողովածուներում՝ հաճախ առանց նրա գիտության: Նրան ճանաչում է բերում «Արարատ» ամսագրում լույս

ընդգծելով անվան հայկականացումը: Մինչդեռ աշուղները ըստ կարգի, անուն էին ընտրում կամ շնորհվում էր մասնագիտական զբաղմունքի, բնավորության, ծագման բնույթից ելնելով, սակայն պարսկերեն, թուրքերեն լեզուներով, օրինակ՝ Զարգար (ոսկերիչ), Շիրին (քաղցր), Քեշիշօլլի (տերտերի տղա) և այլն:

² Սահակյան Ա., Հայրենաշունչ քնար, Երևան, 1965, էջ 22-23:

³ Նույն տեղում, էջ 25-26:

⁴ Լևոնյան Գ., Աշուղները և նրանց արվեստը, Երևան, 1944, էջ 22:

⁵ Պարսամյան Վ.Ա., Հայ ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1959, էջ

տեսած երգերի փունջը⁶ : Զիվանու երգերի առաջին ժողովածուն հրատարակվել է Ալեքսանդրապոլում⁷ , որը լույս տեսնելուց հետո շատ շուտ սպառվում է: Հաջորդ ժողովածուն նույնպես տպագրվում է Ալեքսանդրապոլում⁸ : Այստեղ է հրատարակվում նաև երրորդ ժողովածուն⁹ : Այնուհետև նրա երգերը տպագրվում և տարածվում են հայկական միջավայրում՝ Անդրկովկասում ու Հյուսիսային Կովկասում, Արևմտյան Հայաստանում և այլուր: Մեզ հայտնի նրա երգերի վերջին ժողովածուն լույս է տեսել Երևանում 1988 թ.¹⁰ : Զիվանու երգերը թարգմանվել են ռուսերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով:

Ինքնակենսագրական տարաբնույթ տեղեկություններով հարուստ է աշուղի «Ճանապարհորդական տպավորություններ» խորագրով ստեղծագործությունը, որը նա գրել է 1900 - 1902 թթ. ընթացքում: Զիվանին պահել է օրագիր, որում օր առ օր գրանցել է տեղի ունեցած արժանահիշատակ դեպքերը, ներկայացրել այն բնակավայրերը, որտեղ երգել է, տեղի ժողովրդի, այդ թվում՝ հայերի վիճակը, կենցաղը, սովորությունները և այլն¹¹ :

Կարող ենք ասել, որ Զիվանին իր ճանապարհորդություններով իսկ միջանկյալ տեղ է գրավում աշուղական գրականության և դասական բանաստեղծության մեջ: Տեղից տեղ գնալը աշուղների բնորոշ հատկանիշն էր: Զիվանու ճանապարհորդությունները, սակայն, ավելի շատ հարազատ ժողովրդի մտավորականի այցելություններ են հայրենի երկրի և հայ գաղթաշխարհի տարբեր բնակավայրերը և ոչ թե սազը ձեռքին «թափառական աշուղի» դեգերումներ:

Զիվանին վախճանվել է 1909 թ. փետրվարի 24-ին: Անվանի աշուղի հուղարկավորությանը մասնակցել են տարբեր ազգերի մեծ թվով ներկայացուցիչներ: Հատկանշական է, որ այդ օրերին «Դաշնակցության» գործով Մետեխի բանտում գտնվող Հովհաննես Թումանյանն ու Ավետիք Իսահակյանը, երբ հուղարկավորության թափոռն անցնում էր բանտի մոտով, վանդակապատ պատուհանից վերջին հրաժեշտն են տվել մեծ աշուղին՝ թաշկինակները թափահարելով¹² :

Զիվանու կյանքի ընթացքի և նրա ստեղծագործությունների զուգահիշ քննությունը ցույց է տալիս, որ նրա մի շարք ստեղծագործություններում արտացոլվել են ոչ միայն իր ապրած ժամանակը, նշանակալից դեպքերը և հասարակական տրամադրությունները, այլև որոշակիորեն իր կյանքի ամենատարբեր դրվագները: Ավելին, կարելի է ասել, որ նրա կենսագրության

⁶ «Արարատ» ամսագիր, 1871, թիվ Ը, էջ 473-474:

⁷ Աշուղ Զիվանու երգերը, Ալեքսանդրապոլ, 1882:

⁸ Նույնը, 1886:

⁹ Նույնը, 1893:

¹⁰ Զիվանի, առաջաբանը գրեց. տեքստը կազմեց և ծանոթագրեց **Ա.Վ.Սահակյանը**: Երևան, 1988:

¹¹ Աշուղ Զիվանի, Անհայ երգեր, (այսուհետև **ԱԶԱԵ**), **աշխտ.** Թ. Պողոսյանի, Երևան, 2009, էջ 596:

¹² **Լևոնյան Գ.**, Երկեր, Երևան, էջ 72:

միջոցով ճշտվում են ոչ միայն տարբեր գործերի գրության հետ կապված մի շարք հանգամանքներ, այլև նրա գրածները կարելի է համարել իր կենսագրության գլխավոր սկզբնաղբյուրը, որի միջոցով հնարավոր է վերականգնել անգամ նրա կյանքի ժամանակագրական ընթացքի գլխավոր դեպքերը:

Այս համգամանքը բնորոշ է ընդհանրապես աշուղական բանաստեղծությանը, այդ թվում և Սայաթ-Նովային: Աշուղները իրենց կյանքին վերաբերող տարբեր տեղեկություններ են հայտնել որոշակիորեն ծածկագրված և այլաբանական ձևերի մեջ, կամ էլ չափածոյի վերջին տներում ուղղակի տեղեկություններ հաղորդել և իրենց կյանքի իրադարձությունները հարաբերել աշխարհի հետ՝ կատարելով համապատասխան բարոյա-փիլիսոփայական եզրահանգումներ:

Ջիվանին այս հարցում ևս միջանկյալ դիրք է գրավում աշուղական և հայ դասական բանաստեղծության միջև: Կենսապատմի աշուղական ընդունված ձևերը նրա մոտ ավելի շատ հանդես են գալիս կենսագրական և ուղեգրական հիմք ունեցող բանաստեղծությունների ձևով: Որպես աշուղական ստեղծագործություններին բնորոշ երևույթ, սակայն կենսագրական տարրը անհամեմատ շատ ավելի մեծ է, քան նոր շրջանի որևէ հայ բանաստեղծի մոտ:

Բ. Ջիվանու անտիպ ստեղծագործությունների տեղը նրա գրական ժառանգության մեջ

Ջիվանու՝ իբրև աշուղի ու նրա ստեղծագործության տպագիր առաջին հիշատակությունը վերաբերում է 1869 թ.: «Աշուղ Ջիվան - Ախրըքալաքի մոտ, Կարծախ գյուղացի. սա պատմել է ստեղծագործությունից մինչ ի Քրիստոսի գալուստը ոտանավորով»¹³: Հոդվածագիրը՝ Ա. Բ. ստորագրությամբ¹⁴ թվարկում է այն աշուղների անունները, ովքեր հայտնի էին Գ. Ախվերդյանին¹⁵ (չէր կարող հայտնի լինել՝ 1852 թ. Ջիվանին 6 տարեկան էր): Յավոք Ջիվանու այս ստեղծագործությունը չի հայտնաբերվել: Դատելով երգի վերնագրից այն ընդգծված կրոնական բնույթ ունի, մի հանգամանք, որ ուղենշային հանդիսացավ Ջիվանու ստեղծագործական կյանքում հետագայում¹⁶:

Աշուղագետները Ջիվանու տպագիր ու ձեռագիր երգերի քանակի վերաբերյալ տարբեր թվեր են նշում: «Հայ նոր գրականության պատմության» Ջիվանուն նվիրված բաժնում մեծ աշուղի ստեղծագործությունների թիվը նշված է 900¹⁷: Աշուղի որդին՝ արվեստաբան աշուղագետ Գարեգին Լևոնյանը, գրում է. «Այս քառասունամյա ժամանակաշրջանում Ջիվանու հորինած երգերի թիվը հասնում է մոտ 800-ի, այսինքն թե՛ միջին թվով տարեկան 20 երգ: Աշուղն ունի

¹³ «Մեղու Հայաստանի» լրագիր 1869, 13, էջ 103:

¹⁴ Ա.Բ.՝ Ավետիք Բաբայան, - Թ.Պ.:

¹⁵ «Մեղու Հայաստանի» լրագիր 1869, 13, էջ 103:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Տես Հայ նոր գրականության պատմություն, հ. III, Եր., 1962, էջ 714:

և թուրք լեզվով գրած երգեր, որոնց թիվը 40- ից չի անցնում»¹⁸ : Աշուղագետ Շավիղ Գրիգորյանի կարծիքով Ջիվանին հորինել է «հազարից ավելի քերթվածներ»¹⁹ :

2002 թ. նոյեմբերին, գտնվելով Լոս-Անջելեսում, բարեբախտություն ունեցա ծերանոցում այցելելու Ջիվանու թոռնուհուն: Նա հայտնեց, որ մեծ աշուղի ձեռագրերի մի մասը ինչ-ինչ ճանապարհներով հայտնվել է մի պարսիկ փաստաբանի մոտ:

Ինչ է ասում Ջիվանին ինքը իր ստեղծած երգերի թվի մասին: Իր ստեղծագործություններից մեկում նա հայտնում է հետևյալը.

**Ջիվանու գրածները հանգով խաղեր են շինած,
Մի հասարակ աշուղ եմ, ես բանաստեղծ չեմ ծնած,
Մինչ հազարից ավելի երգեր ունիմ հորինած,
Չեմ ստացել պոետի անուն հռչակ, բանաստեղծ»²⁰ :**

Երգը ստույգ թվագրված է՝ 1899 թ. մարտի 23: Այս խոստովանությունից հետո Ջիվանին ապրել ու ստեղծագործել է ևս 10 տարի, ընդ որում, բավականին արդյունավետ: Աշուղի կողմից վկայակոչված այս թվի վրա կարծես ոչ ոք ուշադրություն չի դարձրել: Թերևս այն պատճառով, որ այդ երգը մինչև 1996 թ. մնացել է անտիպ:

Մեջբերված քառատողում նշված թվով 1000 ից ավելի երգերից Ջիվանու կենդանության օրոք, բնականաբար, ոչ բոլորն են հրատարակվել: Աշուղի ուժերի ծաղկուն շրջանում՝ 1896 թ., Գ. Լևոնյանը իր հեղինակած «Հայկական այժմյան քնարերգական բանահյուսությունը և աշուղ Ջիվանին» հոդվածում նշել է, որ Ջիվանին ունի հետևյալ անտիպ ստեղծագործությունները. «Ազգային երգարան» (բոլորովին անտիպ երգեր), «Հմայակ և Արուայակ» երգերով ազգային վիպասանություն, «Աշուղ-Ջիվանու երգերը» Դ (նոր երգեր), «Աշուղական երգեր» (տաճկերեն)²¹ :

Ջիվանու ծննդյան 150 ամյակի հոբելյանական օրերին լույս տեսավ նրա անտիպ երգերի ժողովածուն, բաղկացած 150 ստեղծագործությունից, որի կազմում ընդգրկվեցին նաև 1990 - 1996 թթ. մեր հրատարակած երգերը²² : «Ջիվանիական անտիպներ» խորագրի ներքո աշուղագետ Շ. Գրիգորյանը ևս լույս է ընծայել 11 երգ, ցավոք, չնշելով երգերի սկզբնաղբյուրները²³ :

Մեր երկարամյա որոնումները հանգեցրին այն եզրակացության, որ անվանի աշուղի ստեղծած ու մեզ հասած տպագիր ու անտիպ երգերի թիվը անցնում է 1190-ից, այդ թվում 400- ը՝ անտիպ, որոնք տեղ են գտել մեր կողմից հրատարած

¹⁸ **Աշուղ Ջիվանի**, Երգերի ժողովածու, Ներածական տեսությամբ, ծանոթագրություններով և խմբագրությամբ **Գարեգին Լևոնյանի**, առաջաբանը **Գ. Վանանդեցու**, Երևան, 1936, էջ 22: Տես նաև՝ **Լևոնյան Գ.**, նշվ. աշխ., էջ 423:

¹⁹ «**Դաշնակցություն» թերթ**, Երևան, 1993, N 12, հունիս, էջ Դ:

²⁰ **ԱՋԱԵ**, էջ 295:

²¹ **Լևոնյան Գ.**, Երկեր, Երևան, էջ 47:

²² **Ջիվանի 150**, Անհայտ երգեր, Երևան, 1996:

²³ «**Դաշնակցություն» թերթ**, Երևան, 1993, N 12, հունիս, էջ Դ:

«Աշուղ Ջիվանի, Անհայտ երգեր» ժողովածուում («Լուսակն» հրատ., Երևան, 2009):

Ամփոփելով մեր դիտարկումները Ջիվանու՝ աշուղ-բանաստեղծի անհայտ, անտիպ երգերի վերաբերյալ, կարող ենք և իրավունք ունենք ասելու, որ դրանք իրենց գեղարվեստական ու հասարակական արժեքով նույնքան քանքարավոր են, որքան տպագիրներն ու հայտնիները և աններելի սխալ կլիներ չընդգրկելը մեծ աշուղի-երգչի ժառանգության ընդհանուր, համակողմանի գնահատության և քննության մեջ:

ԳԼՈՒԿ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐՈՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Հայկական հարցի բանաստեղծական անդրադարձը

19-րդ դարի երկրորդ կեսին հայ աշուղական երգարվեստ մուտք գործեցին նոր թեմաներ ու մոտիվներ, որոնք անմիջականորեն պայմանավորված էին ժամանակաշրջանի քաղաքական ու հասարակական իրադարձություններով:

Ջիվանու ստեղծագործական կերպարը բնութագրվել է գերազանցապես տպագիր երգերի հիման վրա: Հայրենասիրական մոտիվները քննարկվել են՝ նկատի ունենալով հանրահայտ «Ես մի ծառ եմ ծիրանի», «Ազգ իմ, որքան նկուն մնաս», «Առանց վախի, առանց ահի» և նման այլ երգեր: Մինչդեռ նրա ողջ ժառանգության մեջ պահպանված ու մեզ հասած մի շարք ստեղծագործություններում հայրենասիրական մոտիվներն ավելի հարուստ են, բազմազան ու ընդգրկուն: Ջիվանին անմիջականորեն արձագանքել է իր ժամանակի հայ հասարակությանը հուզող իրադարձություններին և իբրև իր ժողովրդի հավատարիմ զավակ ու ճշմարիտ հայրենասեր՝ պատրաստ է եղել իր անձով ու քնարով ծառայել նրան:

Հայրենասիրական մոտիվները Ջիվանու ստեղծագործություններում հանդես են գալիս խոհական, խրատական, սիրային, պանդխտության, սոցիալական, պատմա-քաղաքական և այլ մոտիվների ու թեմաների հետ միահյուսված՝ իբրև մի ամբողջական համակարգ:

Ստեղծագործական կյանքի առաջին շրջանում Ջիվանին հայրենիքի հանդեպ անհուն սիրո զգացմունքները, նրա վիճակի պատճառած ցավն ու մորմոքը արտահայտել է մոր կերպարի միջոցով: «Մայր իմ» ստեղծագործության մեջ (1886 թ.) մայրը Մայր Հայաստանն է՝ անկոչ հյուրերի, տնփեսաների, «այլակրոն պետերի և այլ նեղելոց» ձեռքից տառապած ու տառապող, ծննդավայրը օտարներին թողած, որդիները գերված, մնացողների ծխերը մարած, լույսը խավարած մի դժբախտ կին: Աշուղը հորդորում է այդ դժբախտ կնոջը չհուսահատվել, ապավինել Աստծուն²⁴:

Ջիվանին թեև կանոնավոր կրթություն չէր ստացել, բայց քաջատեղյակ էր Հայաստանի պատմությանը՝ վաղնջական ժամանակներից մինչև իր ապրած

²⁴ ԱԶԱԵ, էջ 367:

ժամանակաշրջանը: Հաճախ, ըստ հարկի, նա դիմում էր պատմության այս կամ այն դրվագին, պատմական հերոսին, համեմատության եզրեր գտնում՝ ներկան ավելի ընդգծելու համար:

Նրան հատկապես գրավել է Անին: Բագրատունյաց փառահեղ մայրաքաղաքը պատմական առումով հնարավորություն է տալիս աշուղին իր ցավն արտահայտելու քաղաքի ներկա վիճակի ու շքեղ, ազգային լիարյուն կյանքով ապրող բնակավայրի անցյալի նկատմամբ²⁵ :

1880 թ. Զիվանին այցելում է Անի: «Աշոտ Ողորմածի գերեզմանի մոտ» երգում նա, համակված ժամանակին հայ հասարակական շրջաններում տիրող ոգևորությամբ, կապված Կարսի մարզը Ռուսաստանին միացնելու հետ, դիմելով Բագրատունյաց երբեմնի ոստանին, գրում է.

**Ժողովուրդդ քու աշխարհում,
Բարի տեր է կառավարում,
Քաղցր նիրհդ չի խանգարում,
Հանգիստ ննջե, հայոց հսկա²⁶ :**

Ինչ վերաբերում է Անի քաղաքին, ապա նա անցել է հզոր, քրիստոնյա տերության հովանու ներքո, հպարտությամբ նշում է աշուղը, մինչդեռ Հայաստան աշխարհի մեծ մասը հեծում է թուրքական լծի տակ: Անիի վերաբերյալ նրա ոգևորությունն անցնում է: Երկու տասնամյակ անց նրա երգերում այլ մոտիվներ են հնչում, ինչպես օրինակ՝ «Եկա տեսա կիսակենդան ավերակ» սկզբնատողով երգում (1902 թ.): Անին վերաշինելու կապակցությամբ Զիվանին հույսեր է տաձել, որոնք ի դերն են եղել: Դրա վկայությունն է «Քեզ շեն էի կարծում, ավերակ գտա» տողը: Անիի ավերակների տեսքը նրա երգում համահունչ ապրումներ ու խոհեր է ծնում.²⁷ :

Աշուղը հանգում է այն եզրակացության, որ Անիի կործանման պատճառը գաղթականությունն է:

**Զիվան, պատճառ նախնյաց բանին,
Ավեր դարձավ անբաղտ Անին,
Չը մտածող գաղտականին
Գլխին փորձություն, գալիք կա²⁸ :**

Այդ միտքը՝ գաղթականության կործանարար դերը Հայաստան երկրի, պետության համար կարմիր թելի պես անցնում է Զիվանու ստեղծագործություններով:

Անիի պատմա-գեղարվեստական ընկալման մասին Ս. Մուրադյանը գրում է. «Մեր ժողովրդի պատմական հիշողության, գիտական ու գեղարվեստական գրականության մեջ Անին մնացել է իր երկու տարբեր, անգամ հակադիր

²⁵ ԳԱԹ, Զիվանու ֆոնդ, գ. 63, թ. 6:

²⁶ ԱԶԱԵ, էջ 245:

²⁷ Նույն տեղում, էջ 211:

²⁸ Նույն տեղում, էջ 542:

վիճակներով.անցյալը՝ փառահեղ ու հերոսական, ներկան՝ անկյալ ու ողբերգական»²⁹ :

Նույն ձևով Ջիվանու «Անիապատումն» է շարունակում այս թեմայով հայ բանաստեղծության մեջ Ներսես Շնորհալու՝ Եղեսիային նվիրված ողբով սկսվող ավանդները: Աբովյանի երազանքը համահունչ էր Ջիվանու իղծերին: Անիի վերականգնմամբ Հայոց փառքի վերականգնման գաղափարը հանգիստ չի տվել Ջիվանուն: Նրա համար քաղաքը գտնվում էր անցյալի ու ներկայի, ավերվածության ու նորոգության սահմանագծին:

Իր մտորումները, մտահոգությունները, նաև հույսերն ու երազանքը արտահայտելու համար՝ ներկայի ու ապագայի վերաբերյալ, Ջիվանին հաճախ է դիմում նաև հայ ժողովրդի անցյալում որոշակի նշանակալից դեր խաղացած պատմա-վիպական անհատներին:

Այդ առումով հատկանշական են Հայկ Նահապետի անվան հետ կապված ստեղծագործությունները: Նախ ասենք, որ նա հավատարիմ է մնում պատմական ավանդույթին՝ Հայկին գնահատում ու իր հայրենասիրական խոհերն է արտահայտում՝ իբրև հայ ժողովրդի նախնու:

Հայկից մեզ է հասել Հայ անունն ազնիվ,

Նորանով մեր երկիրը կապի Հայաստան³⁰ :

Ջիվանին պատմա-հայրենասիրական թեմաներով բանաստեղծություններով ընդլայնեց ու մի նոր աստիճանի հասցրեց աշուղական երգերի հայրենասիրական թեմատիկան: Իր ստեղծագործություններով նա ևս ժամանակի ազատագրական գաղափարներին արձագանքեց Հայոց անցյալի փառքի ոգեկոչմամբ, որն օրինակ էր ծառայելու ժամանակակիցների համար:

Ցարական խստացող գրաքննության պայմաններում, ուր հետապնդվում և արգելվում էր ազատասիրական գաղափարներով գործերի տպագրությունը, Ռաֆֆու «Սամվելով» ձևավորված գրական ավանդներով Ջիվանին ևս իր ասելիքը ներկայացնում է անցյալից վերցված օրինակներով:

Բ. Ազգային միասնականության մտահոգությամբ

Ջիվանին հայ ազգը պահող երեք կարևոր գործոններից առաջինը համարում է հավատն ու կրոնը: «Հարց ու պատասխան»³¹ վերնագրով երգում (1905 թ.) այն հարցին, թե՛ «Ի՞նչն է պահել հայոց մինչև ի հիմա», պատասխանում է.

Այն երեքն են պահել հայոց մինչև ի հիմա,

Սուրբ կրոնը, լեզուն և հայոց գիրը :

Աշուղի հայրենասիրական մոտիվների համակարգում հայոց հավատի նկատմամբ նրա վերաբերմունքն ունի այլևայլ դրսևորումներ:

Աստծուն նա անվանում է սեր, բժշկապետ ու հայցում, որ հայ ազգին երբայեցոց Մովսեսի նման «մի հովիվ պարզևե անձանվեր»:

²⁹ Մուրադյան Ս., Գրական հանգրվաններ, Երևան, 2003, էջ 56:

³⁰ ԱՋԵ, էջ 31:

³¹ ԱՋԱԵ, էջ 299:

Աշուղի երգերում այս կապակցությամբ ուշագրավ են Խրիմյան Հայրիկին նվիրված գործերը: Նա հետևում է Խրիմյան Հայրիկի գործունեությանը կաթողիկոս ընտրվելուց ի վեր և գնահատում, գովերգում ու փառաբանում վերջինիս՝ իբրև իր հոտին անմնացորդ նվիրված արթուն հովիվ, իր ազգի լեզվի, կրոնի ջերմ ու հավատարիմ պաշտպան:

Ջիվանու հեղինակած գուլքի երգերը խարսխված են Ամենայն Հայոց կաթողիկոսի հայրենասիրական գործունեության, նրա անցյալի նշանավոր տարբեր գործերը շեշտելու ու գնահատելու վրա: Խրիմյան Հայրիկին նվիրված երգերը կարծես թե ներկայացնում են նշանավոր հոգևորականի կյանքի տարեգրությունը՝ կաթողիկոս ընտրվելը, ժամանումը Ս. Էջմիածին և օծումը, գահակալությունը ու մահը: Նրա մասին առաջին ստեղծագործությունը գրվել է 1892 թ. մայիսի 7 ին ³², երբ հայտնի է դառնում, որ Խրիմյան Հայրիկն ընտրվել է Ամենայն Հայոց կաթողիկոս: Աշուղը մեծ հավատ ունի Խրիմյանի հանդեպ, նրան համեմատում է 4-5-րդ դդ. հայ նշանավոր հոգևոր գործիչներ Մեծն Ներսեսի ու Սահակի հետ, համոզված է, որ թեև ընտրյալը ծեր է, բայց հոգով ու գաղափարով նոր է, հայրենիքն այնուհետև սուգ ու լաց չի անի, նրա վերքերին դեղ ու դարման կանի ազգընտիր կաթողիկոսը: Աշուղը համոզված է նաև, որ «Նորան կը հաստատե մեր թագավորը», այսինքն՝ ռուսական կայսրը: Ըստ «Պոլոթենիեի» կաթողիկոսի ընտրությունը պետք է հաստատեր Ռուսաստանի բարձրագույն իշխանությունը:

Ջիվանու երգերում հայրենասիրական մոտիվները հաճախ դրսևորվում են պանդխտության, գաղթականության մոտիվների հետ միահյուսված: Քաջատեղյակ լինելով մեր ժողովրդի պատմությանը՝ աշուղը գիտակցում է հայ ժողովրդի գոյությանը սպառնացող վտանգի մեծությունը, որ պարունակում է գաղթը, պանդխտությունը:

Ջիվանու երգերի հայրենասիրական մոտիվների համակարգում տեղ են գտել նաև ազգի պառակտման ու անմիաբանության երևույթի մասին խոհերն ու զգացումները: Ջիվանին հրապարակախոս երգիչ էր, իր դարաշրջանի ժամանակագիրը: Նրա քնարը մշտապես արթուն է եղել մայր ժողովրդի ու հայրենիքի համար ստեղծված աննպաստ, եթե չասենք վտանգ ներկայացնող երևույթների նկատմամբ: Այդպիսի երևույթ էր պառակտվածությունը, որը հետևանք էր նաև հայերի մայր եկեղեցուց անջատվելու, բաժանվելու, քրիստոնեության այլ ուղղություններին, աղանդներին դավանելու: Իր ստեղծագործական կյանքի արշալույսին նա սեր ու միաբանություն էր քարոզում հայ ժողովրդին: 1872 թ. գրած երգում ասում է.

**Այլևայլ ազգաց ծեսերը մեզի չ'թողին խաղաղ,
Միության հոգին առան, պատրաստելով կենաց դագաղ,
Չորս համոզմունք կա հիմա Հայոց մեջը, հազար ավաղ,
Այսպիսի ցրվյալ հոտին Աստվածն օգնե կենդանի՝³³ :**

³² Նույն տեղում, էջ 329:

³³ Նույն տեղում, էջ 228:

Ջիվանու՝ իբրև ստեղծագործող անհատականության, հայ աշուղի համար անընդունելի է ոչ թե այլ դավանանքի պատկանելությունը³⁴, այլ դավանափոխությունը, ինչպես նաև անհավատությունն ու անսկզբունքայնությունը³⁵:

19-րդ դ. վերջին և 20-րդի սկզբին Արևմտյան Հայաստանում հայերի շարունակվող, հարատևող զանգվածային կոտորածներն ու Անդրկովկասում ստեղծված քաղաքական աննպաստ մթնոլորտը Ջիվանին վերապրեց չափազանց ծանր: Եղավ մի շրջան, երբ աշուղը կարծես թե վերջնականապես հուսահատվեց և թվում էր, որ ամենակարող Աստվածն անգամ ի զորու չէր փոխելու հայերի ճակատագիրը: 1895 թ. դեկտեմբերի 10-ին նա գրեց մի երգ, որի ամբողջական բնագիրը, ցավոք, հնարավոր չէ վերականգնել և որի վերնագիրը «Տեր ողորմյա» էր, որը հետագայում աշուղը դարձրեց «Ազգիս տեր ողորմյան» երգին տալով առավել ընդհանրացնող համազգային բնույթ: Փրկության ուղի, ելք չգտնելով Ջիվանին այս ստեղծագործության մեջ Աստծուց ողորմություն է հայցում իր խաչյալ որդու՝ հայ ժողովրդի համար:

Եկող Նոր տարին, սովորաբար, լավատեսական մաղթանքների և տրամադրության է մղում: Ջիվանին, սակայն տարեվերջին գրված այս բանաստեղծությունում՝ սկսված համիդյան ջարդերի շրջանում, խորին հուսահատությամբ է նայում ապագային և ապավինում Աստծուն:

Անանձնական ցավով ու մտահոգությամբ է նա դիմում Աստծուն իր աղերսն արտահայտելով Սիմեոն Ա Երևանցու (կթղ. 1763-1780թթ.) տողերի հետևողությամբ: Սիմեոն կաթողիկոսի կողմից «Աղօթք» վերնագրված գործը, որն հայտնի է «Արի՛, Աստուած հարցըն մերոց...» սկսվածքով, Ջիվանին իր գործի վերնագրում հիշում է «Տէր Ողորմեա» ձևով, որն կրկնվում է Սիմեոն կաթողիկոսի գործի յուրաքանչյուր տան վերջում:

Ջիվանու «Ազգիս «Տեր Ողորմյան»՝ այս խոսքերի ազգային նորովի իմաստավորումն է, կատարված ի տես ազգային սկսված արհավիրքի:

Սիմեոն կաթողիկոսը առանձնական, անհատական աղոթքից անցում է կատարում ազգային ընդհանրացմանը՝ Աստծուն դիմելով հայ ժողովրդի համար.

**Արի՛, Աստված հարցըն մերոց,
Որ ապաւնդ ես նեղելոց,
Հա՛ս յօգնութիւն ծառայից Քոց,
Անօգնական ազգիս Հայոց.**

Տէր, ողորմեա՛ , Տէր ողորմեա՛³⁶ :

Հին ու նոր գրականությունների սահմանազդին կանգնած հայրապետը նեղյալների ապավեն Աստծուն դիմում է իր ազգի փրկության համար, ովքեր որպես քրիստոնյա ժողովուրդ Աստծո ծառաներն են:

³⁴ Ջիվանու անձնական կյանքը, համագործակցությունը այլադավան, այլազգի երգիչների հետ դրա վառ վկայությունն է: - Թ.Պ:

³⁵ ԱԶԱԵ, էջ 401:

³⁶ Նազարյան Շ., Ողբի և սթափման բանաստեղծությունը, Երևան, 1992, էջ 322:

Ասվածին համահունչ ձևով հայոց կաթողիկոսի հետևողությամբ Ջիվանին գրում է.

**Տկարներուն տեր ու պաշտպան,
Աստված հզոր լեր պահապան,
Վերջի օրն է հայ ազգության,
Տեր ողորմյա, տեր ողորմյա³⁷ :**

Երկրորդ տան մեջ Սիմեոն Երևանցին Տիրամոր և Ս. Էսաչի բարեխոսությանն է դիմում Տիրոջ փոքր հոտի՝ հայ ժողովրդի համար: «Փոքր հոտ» խոսքերը վերցված են Ղուկասու Ավետարանի «Մի երկնչիր հոտ փոքր» տողից.

Նույն այս ընթացքով Ջիվանին խաջյալ Քրիստոսի բարեխոսությանն է ապավինում առ Հայրն Աստված:

Ինչպես Սիմեոն կաթողիկոսի, այնպես էլ Ջիվանու գործը բաղկացած է չորս բանաստեղծական տներից:

Ջիվանու սերը մայր հայրենիքի ու ժողովրդի հանդեպ, նրա էության խորքերը թափանցելու, նրա բնույթն ու ոգին ճանաչելու կարողությունը անսահման է: Նրա հավատն իր ազգի հանդեպ, իղձն էր իր ժողովրդին տեսնել ազգերի ընտանիքի մեջ արժանավայել ու պատվավոր տեղում, հիրավի, այնքան էր զորեղ ու հիմնավոր, որ արժանի է պարզապես հիացմունքի: Այդ առումով նրա ստեղծագործությունների շարքում բացառիկ է «Հայոց խեղճ ժողովուրդ քեզ լավ՝ թե ուշ, թե վաղ պիտի տեսնին» սկզբնատողով երգը (1907 թ.): Իր հավատի ու սիրո մեջ Ջիվանին մնաց աներեր, հպարտ իր հայությամբ, իր ժողովրդի արժանիքներով, թերությունների նաև դառնաղետ ճակատագրի համար վշտացող հայ մարդ³⁸ :

Գնալով ավելի սպառնալի չափեր ընդունող գաղթականության պայմաններում Ջիվանին ոչ միայն կոչ է անում վերջ տալ պանդխտությանը, Երրիմյան Հայրիկի օրինակով ոգեկոչում տեր կանգնել պապենական հողին, այլև խորապես մտահոգվում թե՛ տարածվող մարդորսությամբ և թե՛ հայ ժողովրդին տարբեր մասերի բաժանող դավանական անհանդուրժողականությամբ, որն առավել էր թուլացնում հայ ժողովրդի ներքին դիմադրողական ուժը:

Այս մտահոգությունները նա լավագույնս արտահայտել է աշուղական երգարվեստին բնորոշ խրատա-հորդորական և իր ապրած ժամանակի բանաստեղծական տարածված հարցադրումներին համահունչ ձևերով:

Գ. Եվրոպական տերությունների և Ռուսաստանի հանդեպ վերաբերմունքը

Ջիվանին, ելնելով նրա ստեղծագործություններում տեղ գտած պատմա-հայրենասիրական մոտիվներից, նրանցում առկա տրամադրություններից,

³⁷ ԱՋԱԵ, էջ 556:

³⁸ Նույն տեղում, էջ 377:

Եվրոպական երկրների նկատմամբ Հայաստանի, Հայկական հարցի ճակատագրի առնչությամբ հուսավառ չի եղել: Բեռլինի վեհաժողովի մասնակից տերություններին նա անվանում է նենգ պիղատոսներ, ամենայն հավանականությամբ Անգլիային՝ ագահ, խորամանկ սատանա: Ինչ վերաբերում է Թուրքիային, Սուլթանին, աշուղը նրանց անվանում է կարմիր գայլ, կարմիր դև, կարմիր հրեշ, բորենի³⁹ :

19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին Զիվանին իր երգերում Եվրոպայի հարցում դրսևորում է շատ որոշակի վերաբերմունք.

Ոչ մեկին չի ազատիլ մեր խրախույսը,

Խավարի փոխվեցավ օտարի լույսը,

Եվրոպայի վերա դրինք մեր հույսը,

Չլսեցինք որևէ մեկ լուր, շատ ափսոս ⁴⁰ :

Ռուսաստանի դերն, ըստ Զիվանու՝ պատմահայրենասիրական թեմաներով ու մոտիվներով գրված երգերի, միանշանակ չի գնահատվել: Եվ դա միանգամայն բնական է՝ պայմանավորված հայ ժողովրդի կյանքում այդ ժամանակաշրջանում նրա իրական դերակատարումով: Բեռլինի վեհաժողովում Ռուսաստանի դիրքորոշումը հայանպաստ էր, հետագա տասնամյակներում այն փոփոխություններ կրեց: Աշուղի զգայուն քնարն ըստ այրմ արծազանքեց այդ իրողություններին:

«Աշուտ Ողորմածի գերեզմանի մոտ»⁴¹ երգում նա մեծարում էր Ռուսաստանին, նրան «բարի տեր» անվանում: Այնուհետև հաճախ՝ արծիվ, որից վախենում է ուրուրը՝ Թուրքիան: Հորդորում է նրան պաշտպան կանգնել հայ ժողովրդին, ազատել թուրքական լծից, գրում է նա 1902 թ. երգում:

Դուն ես ինձ նշանել, դուն էլ պսակե,

Թող մեր տունն էլ մի օր լինի հարսանիք⁴² :

Զիվանին իրատեսորեն է գնահատում ռուս-թուրքական հարաբերությունները, մեկ հարյուրամյակում երկու երկրների միջև երեք անգամ տեղի ունեցած պատերազմները, և նրա համակրանքը անվերապահորեն Ռուսաստանի կողմն է: «Հեռու արևելքում մի թզուկ ծնավ» սկզբնատողով երգում (1904 թ.) ներկայացնում է երկու հակադիր ուժերի. մի կողմում հեռավոր արևելքում ծնված թզուկն է՝ «դեղնագույն, փոքրաթիվ, կարճահասակ», մյուս կողմում՝ անպարտելի արծիվը, որի դեմ պատերազմի կրակ է բորբոքում թզուկը⁴³:

Աշուղն առանձին հույսեր չի տաձել թուրքական բռնապետության կործանման հետ կապված: Բեռլինի վեհաժողովից կարճ ժամանակ անց

³⁹ ԱԶԱԵ, էջ 548, Զիվանու ֆոնդ, Գ. 34, թ. 55:

⁴⁰ ԱԶԱԵ, էջ 275::

⁴¹ Նույն տեղում, էջ 245:

⁴² Նույն տեղում, էջ 610:

⁴³ Նույն տեղում, էջ 399:

Ջիվանին համոզվում է, որ վեհաժողովի 61-րդ հոդվածը միայն չարիք է բերում արևմտահայությանը, աղետներին նորերն ավելացնում:

Ջիվանին մայր ժողովրդի վիճակին անդրադարձել է Բեռլինի վեհաժողովի կողմից ընդունված 61-րդ հոդվածի կապակցությամբ⁴⁴: Հայ հասարակության որոշ շրջաններ դեռևս հույսեր էին փայփայում այդ հոդվածի և Եվրոպայի ազատագրական առաքելության նկատմամբ: Ջիվանին իրատես քաղաքագետի խորաթափանցությամբ նկատում է (1904 թ.):

**Տասնըվեց համարը⁴⁵ ձեռքիցս առան,
Նախանձները վա[թ]սունումնեկ դարձրին,
Նենք պիղատոսները ինձ բժիշկ դառան,
Հին ցավերուս վրա նորից ցավ դրին⁴⁶ :**

«Բաղտավոր ազգեր» ասելով աշուղը նկատի ունի բալկանյան ժողովուրդներին, որոնք Բեռլինի վեհաժողովի դաշնագրով ազատվեցին թուրքական լծից: Նա քանիցս ուղղակի հիշատակում է այդ ժողովուրդներին հականե անվանե. «Ինչպես բուլղարներուն, սերբերուն արիք⁴⁷»:

«Վեց հարուստ ըռեսի ձեռքով մի հատիկ արտ վարեցի» (1904 թ.) սկզբնատողով երգում արտի, ռեսների ու բնական աղետի այլաբանությամբ արտահայտում է իր վերաբերմունքը Բեռլինի վեհաժողովի մասնակից վեց տերությունների ու հայ ժողովրդի ճակատագրում նրանց խաղացած դերի հանդեպ: «Ուրիշին հավատալով՝ փայլուն ճրագս մարեցի», - դառնությամբ նկատում է աշուղը⁴⁸ :

Բեռլինի կոնգրեսի և հայկական հարցի վերաբերյալ Ջիվանու ըմբռնումները բանաստեղծական խտացմամբ և այլաբանությամբ արտահայտվել են «Հո» տառը՝ բանաստեղծության մեջ, ուր «Հո»-ն Հայաստանն է⁴⁹:

Գլխատառից հասարակ դառնալով և աստիճանից գլորել ասելով նկատի ունի հայկական հարցի Բեռլինի կոնգրեսի 16-րդ հոդվածից Սան-Ստեֆանոյի կոնֆերանսում շրջափոխվելով 61-րդ կետ դառնալը:

Հո-ի փոքրանալով Թո-ին հպատակ դառնալը նշանակում է, որ Հայաստանի անկախանալը չստացվեց և նա շարունակեց Թուրքիային հպատակ մնալը: Բառարանից զրկվելու մասին գրելով նկատի ունի Սուլթան Համիդի հրամանը՝ բառարաններից հանել և չհիշել Հայաստան բառը:

Չնայած բոլոր տեսակի խարդավանքներին հայկական հարցի օրակարգում մնալուն է վերաբերվում երկրորդ տունը:

⁴⁴Այդ հոդվածով նախատեսված բարենորոգումները չիրականացվեցին, հայերի վիճակը Արևմտյան Հայաստանում ավելի վատթարացավ, - Թ.Պ.:

⁴⁵Նկատի ունի Սան Ստեֆանոյի համաձայնագրի 16-րդ հոդվածը, Թ.Պ.:

⁴⁶ԱԶԱԵ, էջ 548:

⁴⁷Նույն տեղում, էջ 524:

⁴⁸Նույն տեղում, էջ 153:

⁴⁹ԶՔ, էջ 48:

Ռա-ն Ռուսաստանն է և երրորդ տան առաջին տողով նկատի ունի Ռուս-թուրքական պատերազմը: Երկրորդ տողով ցանկանում է ասել, որ Բալկանյան ճակատում տարած հաղթանակով Սե-ն՝ Սերբիան և Բեն՝ Բուլղարիան, բառարանում ազատ տեղ գտան, այսինքն՝ անկախացան:

Ալեքսանդր Երկրորդին անվանելով Կեն, նրա միջոցով արտահայտում է Ռուսաստանից ունեցած ակնկալիքները, թե Հո-ն ևս ցանկանում է դուրս գալ տանջանքից՝ թուրքական տիրապետությունից:

Կերջին տան մեջ նրբագեղ Հո-ին հակադրում է Քե-ն՝ քրդերին, թե Քեն որպես մի կոպիտ տառ հանգիստ չի տալիս Հո-ին, խանգարելով նրա ձգտումներին: Պատահական չենք համարում Ջիվանու հետաքրքրությունը վիպական քաջ անվանյալ հերոսների հանդեպ (Քաջ Արամ և այլն) ընդհանրապես: Նրա ժառանգության մեջ պահպանվել է արևելյան վիպական հերոս Քյոռ Օղլու վերաբերյալ մի երգի փոխադրություն⁵⁰, որի ամբողջական բնագիրը վերականգնել չհաջողվեց:

1887 թ. մտցված զինակոչության, ցարական բանակում պարտադիր զինվորական ծառայության օրենքը հայ ժողովրդի լայն շրջաններում որոշակի դժգոհություն հարուցեց: Ստեղծվել էր բացասական վերաբերմունք, որն արտահայտվեց նաև ժողովրդական երգերում: Այդ կապակցությամբ ստեղծվեցին մի շարք երգեր, որոնք հայտնի են «սալաթի խաղեր» անվամբ և կենցաղավարում էին մինչև 20-րդ դարի վերջերը⁵¹: Ջիվանին, ի տարբերություն այդ մտայնության, զինվորական պարտադիր ծառայությունը գնահատում էր իր անխախտ դավանանքի դիրքերից, որը, մեր համոզմամբ, ավելի ճիշտ էր: Ազգին, հայրենիքին զինվոր է պետք և այդ գիտակցությամբ էլ նա գնահատում է երևույթը: Այդ առումով ուշագրավ են նրա «Ձինվորի երգը»⁵² և «Խրախույս նոր զինվորներին»⁵³ ստեղծագործությունները: Այս երգերի գրության թվականներն անհայտ են, սակայն դատելով նրանց ոգուց, կարելի է ասել, որ դրանք ծնունդ են առել 19-րդ դարի 80-90-ական թվականներին, զինակոչի օրենքի գործադրման սկզբնական շրջանում: «Ձինվորի երգում» զինծառայության մեկնող հայ երիտասարդը հրաժեշտ է տալիս հարազատներին, խոստանում է լավ ծառայել «թագավորության», բարձր պահել հայի պատիվը, թշնամու առաջ վիզ չծռել:

Ջիվանու ստեղծագործություններում, այսպիսով պատմական մոտիվները աշուղական բանաստեղծությանը բնորոշ այլաբանությամբ ծառայում են ժամանակի ազգային-հասարակական ձգտումներին, ուր Անին խորհրդանշում է հայոց պետականության ու երբեմնի փառքի վերականգնումը, իսկ Խրիմյանը ներկայացվում է որպես խորհրդանիշը հայոց ազատատենչության, որի

⁵⁰ ԱՋԱԵ, էջ 359:

⁵¹ Դազիյան Ա., Հայ ժողովրդական ուզմի և զինվորի երգեր, Երևան, 1980, էջ 22, 75-76:

⁵² ԱՋԱԵ, էջ 218:

⁵³ Նույն տեղում, էջ 440-441:

առանցքում են Հայոց Հայրիկի այն խոսքերը, թե իր ձեռքով մի օր օծելու է Հայոց իշխան:

Հայության հուսախաբությունները, հիասթափությունը եվրոպական պետությունների երկդիմի վերաբերմունքից Ջիվանին արդեն արտահայտում է աշուղական այլաբանությամբ՝ թղթյա շերեփի, նենգ Պիղատոսների և այլ համեմատությունների միջոցով: Միաժամանակ նույն աշուղական բանաստեղծությանը բնորոշ խրատականությամբ նա հորդորում է ազգային միասնականության, հայերի համախմբման, երկրի ու ժողովրդի ուժեղացման, որպեսզի հայության ձայնն ուժեղ հնչի և նրա հետ հաշվի նստեն մեծ տերությունները:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶՍՏԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԻ ԵՐԳԻՉԸ

Ա. Ազգային ազատագրական պայքարի ջատագովը

Ջիվանին ոչ միայն աշուղական բանաստեղծությանը բնորոշ գեղարվեստական այլաբանություններով է անդրադարձել հայ ժողովրդի ազատագրմանը և գալիքին վերաբերող հարցերին, որոնց բնորոշ օրինակը նշանավոր «Ձախորդ օրերն...» սկսվածքով ստեղծագործությունն է, այլև ուղղակիորեն մի շարք գործեր է գրել նվիրված 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ազատագրական պայքարի հերոսներին ու 1903-1905թթ. Անդրկովկասում հրահրված հայ-ադրբեջանական ընդհարումների ինքնապաշտպանական մարտերին:

Հիշյալ գործերը կառուցված են պատմական որոշակի իրադարձությունների վրա հիմնված և բանաստեղծական ձևի մեջ արտահայտված ազգային-քաղաքական ընդհանրացումների վրա: Պայմանավորված այս հանգամանքով Ջիվանու հիշյալ ստեղծագործությունները մի կողմից կարևորվում են գրական-հասարակական առումով և մյուս կողմից, ինչ-որ, տեղ ունեն բանաստեղծական ձևի մեջ դրված պատմական սկզբնաղբյուրի և վավերագրի արժեք, քանի որ որոշակի տեղեկություններ են հաղորդում տեղի ունեցած այս կամ այն իրողության և գործչի մասին:

Ջիվանին՝ լինելով այդ դեպքերի և իրադարձությունների ժամանակակիցը, կամ դրանց ականատեսն է եղել և կամ էլ անմիջաբար լսել ականատեսներից: Այնպես որ հիշյալ գործերը հայ ազատագրական պայքարի ոչ միայն բանաստեղծական արտահայտությունն են, այլև այդ պայքարի մի շարք էջերի գրառումները ժամանակակցի կողմից:

Ջիվանու երգերում բոլորից հաճախ հանդես է գալիս Վարդան Մամիկոնյանը, մեր պատմության ամենանվիրական ու պաշտելի վիպականացված կերպարը: «Քաջ Վարդան»⁵⁴ երգում (1889 թ.) աշուղը սիրելի

⁵⁴ **Ջիվանու քնարը**, (այսուհետև **ՋՔ**), աշխտ. **Ա. Սահակյանի**, Երևան, 1959, էջ 88:

հերոսի կերպարը ստեղծում է նրա կյանքի կարևոր հանգրվանները ներկայացնելով, իմաստավորում է իբրև օրինակ գալիք սերունդների համար:

Եռատուն երգը Վարդանին բնորոշող մակդիրների կրկնությամբ՝ հզոր, քաջ, պատմական, իրական անհատին հաղորդում է հերոսական գծեր: Նույն իմաստավորմամբ ու մեկնաբանությամբ է նա ներկայացնում, արժևորում ժամանակակից հերոս անհատներին, ազատության համար ոտքի ելած քաջերին (Գոլոշյան, Անդրանիկ, Աղբյուր Սերոբ, Գևորգ Չավուշ և այլն):

Մեծ աշուղի երգերի մի ստվար խումբ վերաբերում է 19-րդ դարի վերջին և 20-րդի սկզբին ծավալված ազատագրական պայքարի մասնակից անհատ հերոսներին՝ Զիվանու երգերի անհատ հերոսները ոչ միայն սեփական ուժերով ազգային խնդիրը լուծելու գաղափարի կրողներն են, այլև այդ ուղին ընտրած, իրականության մեջ այն գործադրողները: Զիվանու երգարվեստում նրանց հայտնվելը պատահական չէ:

Զիվանու սիրելի հերոսը, գաղափարակիրը Անդրանիկն է, ով անձնական հատկանիշներով համապատասխանում էր աշուղի երևակայությամբ ստեղծված կերպարին: «Ուղերձ» երգում հերոսին նա բնութագրում է իբրև սերմնացան և դա է Զիվանին համարում Անդրանիկի դերը հայ ժողովրդի պայքարի և մաքառման ճանապարհին:

Երգերի քննարկվող փունջը պատմական բնույթ ունի: Դրանք իբրև պատմական երգեր հորինված են իրական հերոսների, անհատների մասին, որոնք ապրել ու մարտնչել են իրական հանգամանքներում հանուն որոշակի գաղափարի՝ հայրենիքի ազատագրության ու մայր ժողովրդի պաշտպանության: Մեր երգարվեստի պատմությունից, գրավոր թե՛ բանավոր, հայտնի գովքի երգերի ավանդներով հորինված այս ստեղծագործությունները ևս գովքեր են: Զիվանու գովքի, փառաբանության ու մեծարման ելակետը ոչ թե և ոչ միայն հերոսների անհատական յուրահատկություններն ու արտաքին բարեմասնություններն են, այլ գերազանցապես նրանց անձնվեր հայրենասիրությունը, քաջությունն ու հավատարմությունը գաղափարին ու ընտրած ուղուն:

Այդ երգերի հերոսների մի մասը (Գոլոշյան, Անդրանիկ, Սերոբ) ծանոթ է ու հայտնի ոչ հեռու անցյալի պատմությունից: Դրանք մեծարվել են ու փառաբանվել նաև ժողովրդական երգիչների կողմից: Սակայն Զիվանու երգերը ինքնատիպ են, աչքի են ընկնում ոչ միայն աշուղական երգարվեստի տաղաչափական կանոնների հմուտ գործադրմամբ, այլ նաև ճոխ ու հարուստ լեզվով, կոտ կառուցվածքով, իրական մանրամասների հավաստիությամբ:

Հերոս, հայրենասեր անհատներին նվիրված երգերի շարքում, ժամանակագրական առումով, առաջնությունը պատկանում է Ալեքսանդր (Վարդան) Գոլոշյանի մասին հորինված ստեղծագործությանը, որի սկզբնատողն իսկ բնութագրական է. «Հայրենիքի փրկության դու առաջին նահատակ»: Հիրավի, Ա. Գոլոշյանը 80-ականներին սկսված ազատագրական շարժման առաջին գործիչներից էր, առաջին նահատակներից: Երգի ստեղծման թվականը չի նշվում, ենթադրվում է, որ այն գրվել է Ա. Գոլոշյանի սպանության լուրի

ազդեցության տակ: Զիվանին հուզական շեշտադրությամբ ներկայացնում է հերոսի կարճատև կյանքի հիմնական փուլերն ու դրվագները.

Ուսումը նոր ավարտած, դու քսանհինգ տարեկան,

Գրիչը վայր զցելով՝ ձեռդ առար հրացան,

Մտար ութ ընկերով ասպարեզը փորձության⁵⁵ :

Զիվանին Գոլոշյանին անվանում է երկրորդ Վահան, նրա հոգին դասում սրբոց Վարդանանց շարքում:

Ա. Գոլոշյանը երգում բնութագրվում է իբրև հայրենիքի փրկության ու ազատության համար զոհված առաջին նահատակ: Ամենայն հավանականությամբ աշուղը ծանոթ է եղել հերոսի կենսագրությանը: Զիվանին չէր կարող անհաղորդ ու անտեղյակ լինել 19-րդ դարի 80-90-ական թվականներին արևելահայոց հասարակական կյանքում լայն արձագանք գտած Ա. Գոլոշյանի և նրա համախոհ գաղափարակից ընկերների հայրենասիրական գործունեությանը:

Ա. Գոլոշյանի անվան շուրջ հորինվել են նաև ժողովրդական երգեր⁵⁶ : Ազգային մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը ևս ծանոթ է եղել Ա. Գոլոշյանին, նրա գործունեությանն ու գաղափարներին. նրա «Հին կոիվը» պոեմը նվիրված է Գոլոշյանին⁵⁷ :

Զիվանին գովերգել ու փառաբանել է ժողովրդական հերոս Անդրանիկին: Աշուղն իր երգն անվանել է «Ուղերձ»⁵⁸ : Բնույթով այն կարելի է դասել ավանդական գովքի երգերի շարքը, առաջին տողն իսկ այդ է վկայում. «Ազգի հարազատ զավակ, անզուգական Անդրանիկ»:

Վերը նշվեց երգի հորինման ժամանակը՝ 1904 թ.: 1900-ական թվականների սկիզբն այն ժամանակաշրջանն էր, երբ հերոսը մի խումբ անձնագոհ քաջերի գլուխն անցած անհավասար կռիվներ էր մղում թուրք բռնապետության դեմ Սասունում, Մշո դաշտում, Առաքելոց վանքում և չնայած ռուսական իշխանության հարուցած արգելքներին, կռիվների արձագանքները հասնում էին Թիֆլիս ու Բաքու, Երևան ու Ալեքսանդրապոլ, Շուշի ու Կարս, ոգևորում ժողովրդական երգիչներին ու բանաստեղծներին: Նույն՝ 1904 թ. աշուղ Շերամը նույնպես Անդրանիկին նվիրված երգ է հորինել⁵⁹, որը լայնորեն տարածված էր և մեր օրերում երգվում է իբրև բանահյուսական ստեղծագործություն⁶⁰: Կարծես թե երկու արվեստակից աշուղները մրցում են ժողովրդական հերոսին արժանավայել գնահատականներով փառաբանելու, մեծարելու ասպարեզում: Այս երկու նշանավոր աշուղների ստեղծագործությունները համեմատելիս դժվար է որևէ մեկին գերապատվություն տալ: Զիվանին Անդրանիկին ևս նոր Վահան է

⁵⁵ ԱԶԱԵ, էջ 387:

⁵⁶ Ղազիյան Ա., Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր, էջ 22, 75-76:

⁵⁷ Ինճիկյան Ա., Հովհաննես Թումանյան, Երևան, 1969, էջ 142-144, 197-200:

⁵⁸ ԱԶԱԵ, էջ 107:

⁵⁹ Շերամ, Երգեր, Երևան, 1969, էջ 15:

⁶⁰ Ղազիյան Ա., Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր, էջ 173:

անվանում, անմահ Սերոբ փառայի հոգու և ոգու կրողը, հորդորում նրան առաջ ընթանալ, մահից չվախենալ, քանզի «նման անդրանիկներ հայերու մեջ շատ կան»: Ժողովրդական հերոսին գովերգում է ամենավեց մակդիրներով, արժանի համարում դափնե պսակի ու հերոսի համբավի, որ իրավամբ վայելում է: Աշուղը կարևորում է մի հանգամանք. պատվի ու հարգանքի, մեծարելու ու գովաբանելու հիմքը հայրենիքին նրա մատուցած ծառայությունն է, նրա անձնագրի գործը: Ըստ Ջիվանու՝ Անդրանիկի ծառայության նշանակությունը սերմնացան լինելն է, ուղի բացելը, հարթելը⁶¹:

Ջիվանու հայրենասիրական պատմական բնույթի երգերը խարսխվում են մի հիմնական գաղափարի վրա. հավատարմությունը ընտրած սկզբունքին, նվիրվածությունը հայրենիքի ազատագրության գործին, մայր ժողովրդի պաշտպանությանը: Աշուղի որդեգրած այս սկզբունքները փոփոխություն չկրեցին նրա ստեղծագործական ողջ կյանքում:

Ազգային-ազատագրական պայքարի հերոսներին նվիրված Ջիվանու գործերը առավել հարազատ են աշուղական երգերի ոգուն, որը պայմանավորված է աշուղական այդ գործերին համահունչ ձևով ժամանակի հերոսներին պանծացնելու ձգտմամբ, որն իր հերթին ավելի համահունչ էր ժողովրդական լայն զանգվածների ընկալմանը և զգացումներին:

Բ. Անդրկովկասի 1905-1907թթ. ազգամիջյան ընդհարումների արտացոլումը Ջիվանու գործերում

Ջիվանին ականատես եղավ Անդրկովկասում 1905 -1907 թթ. տեղի ունեցած հայ թուրքական զինված ընդհարումներին ու խոր ցավով արձագանքեց արևելահայերին հասած այդ ծանր ու արյունալի փորձությանը: Նրա երգերի մի շարք գրվել են հենց այդ տարիներին և վերաբերում են այդ ողբերգական իրադարձություններին: Ըստ որում, երգերում դիտվում է որոշակի փոփոխություն, այսպես ասած էվոյուցիա. երևույթի դատապարտումից սկսած մինչև ինքնապաշտպանության կոչ, առանձին կոիվների պատմությունը ներկայացնելուց մինչև այդ կոիվներում աչքի ընկած քաջերի գովք:

Ջիվանին երգեր է հորինել նաև նվիրված Անդրկովկասի հայկական բնակավայրերում տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումներին, հայերի մղած ինքնապաշտպանական կոիվներին: Այդ առումով հետաքրքիր նմուշ է ներկայացնում Համազասպ Սրվանձտյանին նվիրված ստեղծագործությունը, որն ընդարձակ վիպական պատմական երգ է: Աշուղն ավանդական ժանրին բնորոշ հնարքներով երգում, ներկայացնում է հերոսի ծագումը, կյանքի հետագա ընթացքը, ինքնապաշտպանական կոիվներին նրա մասնակցությունն ու գործած սխրանքները: Երգից պարզվում է, որ Համազասպը «Հայաստանի Վասպուրական աշխարհից է», «Արծրունյաց ժառանգ», համբավավոր հորեղբոր՝ Գարեգին Եպիսկոպոս Սրվանձտյանցի արժանի ժառանգորդը, նրա գործի

⁶¹ ԱՋԱԵ, էջ 107:

հավատարիմ հետևողը, և եթե նա գրչով էր ծառայում ժողովրդին ու հայրենիքին, ապա Համազասպը.

**Սա էլ զենքը ձեռին՝ անվախ, քաջագով,
Խմբեր կառավարող քաջ պատերազմիկ ⁶² :**

Ջիվանին միաժամանակ իր վերաբերմունքն է արտահայտում երջանակահիշատակ Գարեգին Սրվանձոյանցի հանդեպ՝ իբրև «Համով-հոտովի» հեղինակի, Խրիմյան Հայրիկի հոգեզավակի, «Արծիվ Վասպուրականի» աշխատակցի ու «Արծիվի Տարոնո» հրատարակչի:

Իր խրատական երգերում Ջիվանին կարևորում էր իր որդիների և ընդհանրապես հայ մարդու ինքնապաշտպանության կարողությունը, ընդունակությունը: «Կյանքի դաս» է անվանել նա իր ստեղծագործությունը՝ գրված 1907 թ., որում աշուղը, հիրավի, հանգել է կյանքի դառը փորձից ելնելով ժամանակի համապատասխան եզրակացության, նա դառնությամբ է դիտարկել, որ տասնյակ հայ սայլապանների մեջ զենք ունեցող մեկը չկա ⁶³: Տարիների հեռվից հայրենասեր, ազգասեր աշուղը խրատ է տալիս իր ժողովրդին. «Լալկանի դեր խաղացող ժողովուրդը չէ երջանիկ...»:

Ջիվանու գովերգած քաջությունը, որը նա ցանկանում է դաստիարակել, պատվաստել իր որդու, աշակերտի բնավորության մեջ, ինքնանպատակ չէ: Նա իր երգերում քանիցս շեշտում է՝ հերոսի, քաջի մահն անգամ պետք է օգտակար լինի շրջապատի համար:

**Աննպատակ չգիտակցված մահը աշուղը մերժում է.
Այնպես մեռիր՝ մահդ մարդկանց օգուտ տա,
Առանց հետք թողնելու կորչելը լավ չէ :**

Եղիշեից, հայկական ավանդույթներով մեր օրերը հասած գիտակցված մահի գաղափարը Ջիվանին փոխանցում է հաջորդ սերնդին:

Արևմտահայության ազատագրական պայքարի հայդուկային հերոսներին և 1905-1907թթ.արևելահայության ինքնապաշտպանական կոիվներին նվիրված գործերի համեմատական քննությունը ցույց է տալիս, որ առաջին խմբի երգերը ավելի հերոսական վիպերգության բնույթ ունեն ու գրված են բարձր և հանդիսավոր ոճով: Երկրորդ խմբի գործերն ավելի նկարագրական են: Նրանց հերոսներն առավել իրական ու առարկայական են, օժտված այս կամ այն մարդկային հատկանիշներով:

Առաջին խմբի գործերում Ջիվանին եթե փորձում է հասնել գեղարվեստական ընդհանրացման ու վերացարկման, ապա երկրորդ խմբի գործերում իր առջև խնդիր է դնում առավել մանրամասն պատկերման և իրադարձությունների իրական ու տեղագրական նկարագրության:

Այս հանգամանքը երկու բացատրություն ունի: Արևմտյան Հայաստանը սահմանից այն կողմ էր և հեռավոր ու նվիրական մի հասկացություն էր, պատված մեր ազգային էպոսին բնորոշ վիպական ընկալմամբ, ապա երկրորդ

⁶² Նույն տեղում, էջ 372:

⁶³ ՋԲ, էջ 599:

խմբի ստեղծագործությունները անմիջականորեն Ջիվանու ապրած արևելահայ իրականությանն էին վերաբերվում, կյանքի գրեթե առօրյա ժամանակալին ընթացքով:

Երկրորդ կարևոր համգամանք այն էր, որ արևմտահայության պայքարի գործիչները նախորդ երկու տասնամյակների ընթացքում արդեն ձեռք էին բերել մեծ հռչակ, պատվել նաև հերոսականությամբ և ստեղծվել էր կերպարային որոշակի ընկալում, որին հետևում էին նրանց նվիրված գործերը գրող բանաստեղծները:

Արևելահայ ինքնապաշտպանության գործիչների մի զգալի մասը, այնինչ իրենց զինվորական գործունեությամբ ի հայտ եկան ընդհարումների օրերին, որպես ժամանակի հոգսերով և թելադրանքով զենք վերցրած անհատներ: Ուստի նրանց հարկավոր էր պատկերել կենսագրական և փաստական մանրամասների բանաստեղծական վերարտադրմամբ և գրական դիմանկարի փառաբանական հատվածներն իսկ պետք է խարսխվեին որոշակի դեպքերի և ոչ թե նրանց անցյալի ընդհանուր մարտական ուղու վրա:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԿՅԱՆՔԻ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ա. Ժամանակը և աշուղը

Ջիվանին ապրել ու ստեղծագործել է իր ժողովրդի պատմության արտակարգ բարդ, հակասություններով խճճված, ողբերգական մի դարաշրջանում:

Անդրկովկաս մուտք գործած, հետզհետե արմատավորվող կապիտալիստական հարաբերությունները մի կողմից, մյուս կողմից՝ հայ ժողովրդի ազատագրական պայքարը, որը գերազանցապես ուղղված էր թուրքական բռնապետության դեմ, ազգամիջյան արյունալի ընդհարումները Անդրկովկասում և ապա օրըստօրե խորացող սոցիալական անարդարությունն ու անհավասարությունը, ժողովրդի լայն խավերի ընդվզումները՝ ուղղված տիրող ռեժիմի դեմ. խնդիրների այս թնջուկը իր արտահայտությունն է գտել Ջիվանու երգերում բազմազան դրսևորումներով: Բնատուր վերլուծական մտքով ու կյանքի բարդ երևույթները խորությամբ ընկալող երգիչն իր երգերում մեծ մասամբ ճշմարտացի ու լայնախոհ մոտեցում է ի հայտ բերում:

Անհրաժեշտ է նշել, որ կյանքի անարդարությունների և սոցիալական անհավասարության դեմ բողոքի և պայքարի գաղափարները աշուղական բանաստեղծություն մուտք են գործում արդեն 18-րդ դարի վերջից⁶⁴ :

Գ. Լևոնյանը Ջիվանու դպրոցի աշուղների կարգախոսն է համարում Նեկրասովի «Նախ քաղաքացի, ապա պոետ» նշանավոր խոսքերը⁶⁵ :

19-րդ դարի վերջին և 20-րդի սկզբին նոր տնտեսական հարաբերությունների հախտուն մուտքն իր հետ բերեց բարոյական արժեքների գնահատման նոր չափանիշներ: Հինը՝ նահապետականը, դժվարությամբ էր տեղի տալիս, իսկ

⁶⁴Սահակյան Հ., Հայ աշուղներ XVII – XVIII դդ., էջ 11:

⁶⁵ Լևոնյան Գ., Աշուղները և նրանց արվեստը, էջ 42-43:

նորը դեռ չէր ընկալվում ու ընդունվում: Ջիվանին գիտակցում է նորի անհրաժեշտությունը: «Բնական» վերնագրով երգում («Հինը կերթա, նորը կուգա» սկզբնատողով, 1905 թ.) նա հետևյալ կերպ է մեկնաբանում հնի և նորի փոխհարաբերությունը.

**Թե որ հները չ'անցնին,
Էլ չի գոյանա նորածին,
Հինը ուժը կուտա երգրին,
Գարնան նոր ծաղիկ կբուսնի⁶⁶ :**

Ընդամենը երեք քառատողից կազմված այս ստեղծագործությունը զարմանալիորեն իրական, նյութեղեն բացատրություն է տալիս կյանքի և մահվան, հնի և նորի փոխանջությունը: Ջիվանին խորապես գիտակցում է նորի, նորոգվելու անհրաժեշտությունը:

Աշուղը որքան էլ հասկանա ու գիտակցի հասարակական կյանքում նորի, փոփոխությունների անհրաժեշտությունը, չի կարող անտարբեր լինել այն բացասական երևույթների հանդեպ, որ ուղեկցում են նորին: Խոսքն այստեղ կապիտալիստական հարաբերությունների և նրա ընդերքում ձևավորվող նահապետականի, քրիստոնեականի հետ անհամեմատելի, արգահատելի երևույթների մասին է, որոնք Ջիվանին անհարիր է համարում նաև իր՝ հայ մարդու, հայ քրիստոնյայի ըմբռնումներին: «Վեցյակ» երգում («Հավատ, հոգի հայիոյել մոտա է դարձել հիմա» սկզբնատողով, 1904 թ.) իր ժամանակի հասարակությունը նա բնութագրում է իբրև հավատ, սրբություն ու ամոթ չունեցող, բարին մերժող, պատիվ ու հարգանք չճանաչող, քրիստոնյա կոչվելուն անարժան մարդկանց հանրություն, որից խորշում են նույնիսկ անհավատները⁶⁷:

Հակասական զգացումներ, տրամադրություններ են արտահայտում ժամակաշրջանի ոգուն, նաև պահանջին արծագանքող երգերը: Եթե 1906 թ. գրած երգում նա արմատական փոփոխությունները վաղ էր համարում, ապա մինչ այդ 1904 թ. հորինած «Հնգյակում», ըստ նրա, զարթնելու ժամանակն է, «ծագել է արվի», ասում է նա: Երկիմաստ, խորհրդանշաններով հագեցած այս ստեղծագործության մեջ նույն աքլորի կանչն ենք լսում, ավետաբեր-լրաբեր մունետիկի ձայնը⁶⁸ :

Ժամանակը Ջիվանին գնահատում է իր՝ քրիստոնեական դավանանքի, բարոյականության չափանիշներով: Անշուշտ, աշուղը փոփոխվող ժամանակների իմաստն այլ կերպ ընկալել ու ներկայացնել չէր կարող

Ժամանակի, կյանքի ավելի փիլիսոփայական, խոհական իմաստավորմամբ ու մեկնաբանությամբ է շնչում Ջիվանու «Ամեն տեղ ցավ ու լաց» («Քարերն էլ ցավ ունեն, սարերն էլ կուլան» սկզբնատողով, 1907 թ.) երգը: Բնության բոլոր երևույթները, իրերն ու առարկաները, շնչավոր, թե անշունչ էակները, աշուղի ընկալմամբ, վիշտ ու ցավ ունեն. «Քամին էլ սուլելիս կարծես թե կուլա,

⁶⁶ ԱՋԱԵ, էջ 408:

⁶⁷ Նույն տեղում, էջ 391:

⁶⁸ Նույն տեղում, էջ 248:

շնկշնկալով ամեն մի դուռ թակում է» տողերից այն տպավորությունն է ստեղծվում, թե քամին ապաստան է խնդրում: Բոլորն էլ վիշտ ու ցավ ունեն, բացի մեկից՝ Տիեզերքի հեղինակից.

**Ջիվանի, մեկը կա անցավ միշտ կայուն,
Տիեզերքի հեղինակը իմաստուն,
Գոյության աղբյուրը անհաղտ աննկուն,
Անվերջ յուր ընդացքը շարունակում է ⁶⁹ :**

Եթե, ըստ աշուղի, աշխարհը, բնությունը համակված են ցավով, ապա ավելի ողբերգական է մարդկային հասարակության վիճակը: Բազմաշերտ, երբեմն հակասական են աշուղի սոցիալական մոտիվները: Հավատ ընծայելով մարդ արարածի ստեղծարար, բարի էությանը՝ նա միաժամանակ հոռետեսական լարեր է հնչեցնում

Արդ, ի՞նչ դեր ունի հայ աշուղը, ի՞նչ նպատակ է հետապնդում նրա առաքելությունը, ինչո՞վ է նա տարբերվում այլ ժողովուրդների աշուղներից, ո՞րն է նրա պատգամը սերունդներին:

Ինքը՝ Ջիվանին իր երգերում քանիցս արժևորել, ներկայացրել է աշուղի դերն ու նշանակությունը հասարակական կյանքում: Այդ առումով առավելագույնս բնորոշ է «Աշուղները» երգը (1900 թ.), որում նա բացահայտում է աշուղ երգչի մտահորիզոնի էությունն ու դիմանկարը.

**Աշուղներից ի՞նչ կսպասեք, գիտուններ,
Անգրագետ և անուսում մարդիկ են.
Նրանց դուք միք ծաղրի, մեծ իմաստուններ,
Նրանք էլ ջոկ տեսակ գույնի ծաղիկ են ⁷⁰ :**

Ջիվանին աշուղ-երգչի մասին ընդհանուր բնութագրությունը ներկայացնելուն զուգահեռ առանձնացնում է հայ աշուղին, շեշտում նրա և այլ ազգերի աշուղների տարբերությունը: «Նվեր այլազգի ընկերիս»(1906 թ.) երգում:

Այդ նույն երգում աշուղն իր այլազգի ընկերոջը անհուն ցավով ներկայացնում է իր և նրա տարբերության պատճառը: Մայր ժողովրդի ողբերգական դրությունը, հայրենակիցների տառապանքները մշտապես կաշկանդել է նրան, ճնշել, նրա լեզուն կարկամել է իր ժողովրդի հասցեին «վատ գրույց, վատ բան» լսելիս: Ջիվանին նախանձով է նայում ընկերոջը, որը «ազատ ազգի ազատ որդի» է: Նրա մի այլ ստեղծագործությունն սկսվում է չափազանց խոսուն տողով. «Օ՛հ, ինչ անբախտ աշուղ եմ ես, որ ուրախ երգ չեմ հորինում»⁷¹ : Նույն երգի երկրորդ տողում մեկնաբանվում է պատճառը. «Հային կարծես չէ պարզել բնությունը խաղ ու խնդում»: Եվ այսպես, Ջիվանին իր ստեղծագործական կյանքում ուրախ երգեր այդպես էլ չգրեց ու չերգեց:

Ջիվանու երգերի շարքում աշուղական արվեստի ու արհեստի, ընդհանրապես Գյումրի-Ալեքսանդրապոլում գործադրվող

⁶⁹ Նույն տեղում, էջ 585:

⁷⁰ Նույն տեղում, էջ 505:

⁷¹ Նույն տեղում, էջ 611:

մասնագիտությունների ու արհեստների բնութագրման առումով առանձին հետաքրքրություն է ներկայացնում 34 քառատողից բաղկացած «Դասիթան արհեստներու մասին» («Ես կուզեմ, որ մի լավ արհեստ սովորիմ» սկզբնատողով, 1904թ.) ստեղծագործությունը: Թվարկելով մասնագիտություններն ու արհեստները, դրանցով զբաղվողներին անհրաժեշտ ունակություններն ու հատկանիշները, աշուղը գալիս է այն եզրակացության, որ ինքը ոչ մի արհեստի պիտանի չէ:

Այս երկարաշունչ դաստանի տողերում թվարկված արհեստներից առավել մոտ են Ջիվանու հոգուն ու սրտին գեղարվեստն ու գրականությունը.

Ամենալավ մեծ արհեստը անդրանիկ.

Գրականություն է իշխող, ազդեցիկ,

Երաժժությունը փայլուն գեղեցիկ.

Լսել տալու համար եղանակ պետք է⁷² :

Ի վերջո, նա որոշում է աշուղ դառնալ, որին շատ քիչ բան է հարկավոր և դառնում է ու «պարզերես» դուրս գալիս.

Ջիվանին գտնում է, որ երգիչը, աշուղը պետք է մշտաջախել լինի: Իսկ եթե այդպես չէ, ուրեմն մեղավորը ոչ թե արհեստն է՝ աշուղությունը, այլ աշուղը ինքը: «Արհեստս նոր հարսի նման» սկզբնատողով ստեղծագործությունը (1906 թ.) արվեստի նշանակության վերաբերյալ հետաքրքիր մտորումներ է պարունակում: Երգը սկսվում է արհեստի՝ նոր հարսի հետ համեմատությամբ, ավարտվում հավերժահարսի հետ համեմատությամբ: Աշուղը արհեստի և տարիքի բաղդատումներով բացահայտում է դրանց հակադրությունը.

Ժամանակի հասարակական կյանքի, հաստատված նոր արտադրական հարաբերություններին և դրանց առաջ բերած հեղաբեկումներին անդրադառնալով, բանաստեղծորեն իր մտահոգություններն ու վերաբերմունքն արտահայտելով՝ Ջիվանին աշուղական բանաստեղծության վերջին փուլը նշանավորում և հարստացնում է նաև քաղաքացիական շնչով զրված ստեղծագործություններով:

Բ. Ջիվանու սիրո քնարը և գինեբզությունը

Աշուղական գրականությանը բնորոշ ձևով Ջիվանու գրական ժառանգության մեջ զգալի տեղ են գրավում սիրո և խրատական երգերը:

Ջիվանին իմաստնացած էր կյանքի փորձով, հարստացած էր ճանաչողական անուրանալի կարողությամբ, իր և հարևան ժողովուրդների մշակույթի, կրոնի, պատմության, գրականության ընձեռած անկրկնելի արժեքներով և այդ ամենը նա կիրառում էր հմտորեն, սիրով ու վարպետությամբ:

Ջիվանին սերն ու կնոջ գեղեցկությունը գովերգել է իր ստեղծագործական կյանքի արշալույսից մինչև վախճանը: Աշուղի սերը համապարփակ է, ընդգրկուն, այն ներառում է մարդ արարածին հատուկ զգացմունքների ողջ բազմազանությունը՝ սեր կնոջ, ընդհանրապես մարդու, հատկապես հայ մարդու՝

⁷² Նույն տեղում, էջ 217:

ընկերոջ, բարեկամի, ծնողների, զավակների, հարազատների, կյանքի ընկերուհու, ամուսնու հանդեպ:

Ջիվանին իր երգերի մի մասը նվիրել է կնոջ արտաքին ու հուզական, բարոյական արժանիքների, սիրո բարձր ու վսեմ զգացմունքների գովերգմանը: Նա երգել է գերազանցապես կարոտ ու երազանք, բաղձանք՝ առ սիրո առարկան, անհասանելի, անպատասխան սիրո տվայտանք, փոխադարձ սիրո վայելքը չճանաչած դառնություն, եթե չասենք՝ ողբերգություն, մնալով հանդերձ քրիստոնեական բարոյականության սահմաններում:

Կանացի գեղեցկության գովքի երգերի վերնագրերի պարզ թվարկումն անգամ մեզ մտովի տանում է մի պատկերասրահ, ուր իշխում են մեծ աշուղի «սիրունները», օժտված արտաքին գեղեցկությամբ ինչ-որ տեղ նման, բայց տարբեր՝ աշուղի հուզաշխարհի, երբեմն բախտի ու ճակատագրի վրա թողած ներգործությամբ.

**Ջիվանին կյանք կառնե թուխ ունքերիցդ,
Նայելով չի հագենար պատկերիցդ,
Ամպած ժամանակդ բաց աչքերիցդ
Մարգարիտ կմաղես, նազելի աղջիկ⁷³ :**

Ազգասեր, հայրենասեր աշուղ Ջիվանու գեղեցկուհիները հայուհիներ են: Նրա վկայակոչած սիրունները հայկական անուններ են կրում՝ Վարդուհի, Հայկուհի, Իսկուհի, Սուսան, Շուշան և այլն: Երգերի վերնագրերն անգամ հայաշունչ են. «Հայ աղջիկ»⁷⁴, «Հայ աղջկա բողոքը»⁷⁵:

Ջիվանին «Առ նազելին» ստեղծագործության մեջ նույնիսկ «համարձակվում է» հակադրվել գոյություն ունեցող ավանդույթին և ի մասնավորի հայ աշուղ Նաղաշ Հովնաթանի գովաբանած «Վրաստանի գյոզալներին».

**Թեպետ Վրաստանի անունն է ելել,
Իսկապես, սիրունիկ չունի քեզ նման⁷⁶ :**

Աշուղը իր գեղեցկուհիներին հաճախ քույր է անվանում: Հայ գրական քնարերգության մեջ, աշուղական երգարվեստում նման ընկալումը, երբ սիրած էակը բնորոշվում է, բացահայտվում է իբրև քույր, սակավ է հանդիպում: Ջիվանու երգերում «քույր» հասկացության իմաստի այդպիսի կիրառումը ընդունված գեղարվեստական հնարանք է: «Առանց քեզ» ստեղծագործությունը սիրած էակի ընդգծված գովքն է⁷⁷ :

«Քույր» բառի բանաստեղծական հաջորդ կիրառությունը գտնում ենք Հարենցի վաղ շրջանի սիմվոլիզմին հարած բանաստեղծություններում:

Քնարերգության մեջ, հատկապես աշուղական երգարվեստում, յուրահատուկ տեղ ունեն գինու, ուրախության ու խրախճանքի երգերը: Ջիվանու՝ աշուղ-երգչի

⁷³ ՋԲ, էջ 446:

⁷⁴ Նույն տեղում, էջ 423:

⁷⁵ Նույն տեղում, էջ 424:

⁷⁶ Նույն տեղում, էջ 449:

⁷⁷ Նույն տեղում, էջ 419:

կյանքը մեծ մասամբ անցել է սրճարաններում ու պանդոկներում: Աշուղի «Անբախտության գինվորներից նետահար» սկզբնատողով երգի հետևյալ միտքը միանգամայն հիմնավոր է.

**Թե հարցանք Ջիվանուս գեցարանը,
Գինետունը, սրչանոցը կզտնեք⁷⁸ :**

Եվ նրա քնարն անմասն չի մնացել գինեագությանից: Կյանքի փորձով իմաստնացած, զգայուն երգիչը այս դեպքում ևս աչքի է ընկնում ողջամիտ, լայնախոհ հայացքով: Խորհրդածություններն ու եզրակացությունները բխում են իրականությունից, խրատ ու դաս են թե՛ իր ժամանակակիցների, թե՛ հետագա սերունդների համար:

Գինեագության մեջ նա դիմում է աստվածաշնչյան Սողոմոնին՝ գինու և կնոջ վերաբերյալ իր համոզմունքները հաստատելու համար.

**Սողոմոնը ասել է՝ կինն ու գինին միշտ հաղտող են,
Ուժեղ են, համ զորավոր են և ամենակարող են,
Երբեմն իսկ կյանքի ցեց են, երբեմն կյանք տվող են,
Դաշնակից են, կապված են սիրով մեկզմեկին⁷⁹ ,**

- ասում է երգիչը «Կյանք կուտան, հոգի կուտան գեղեցիկն ու գինին» սկզբնատողով երգում (1902 թ.): Այնուհետև Ջիվանին, իբրև ճշմարիտ հայ քրիստոնյա, դրվատում է գինու չափավոր գործածությունը, որն ընդունում է նաև «մեր ծեսը», ինչպես նաև գեղեցիկ ու առաքինի կնոջը, որը զարդարում է «ճոխ հանդեսը»՝ նրան համարելով արքայության զավակ:

Ջիվանու՛ վերը բերված երգը հուշում է վերստին դիմելու Հովի. Թումանյանին, շեշտելու համար այն բանաստեղծական գեղարվեստական ընկալման ընդհանրությունը, որ առկա է երկու մեծ հոգիների ստեղծագործական աշխարհում, ընդգծելու նրանց հոգեհարազատությունը: Նրանք միակամ ու միանշանակ են իմաստավորում տղամարդու կյանքում սիրո և գինու ունեցած հուզական խթանիչ դերը՝ իբրև անձնական երջանկության, ոգևորության աղբյուրի, ճակատագրական, նաև հերոսական ազնիվ ու վճռական քայլերի մղելու դրդապատճառների. Հավատացյալ Ջիվանին վկայակոչում է առակագիր, բարոյախոս, իմաստուն մականվամբ հայտնի աստվածաշնչյան Սողոմոնին, բանաստեղծ Թումանյանը՝ պարսիկ մեծ բանաստեղծ, հերոսության, ասպետության, զնվության, ասիրո ու գինու երգիչ Ֆիրդուսուն:

**ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՋԻՎԱՆՈՒ ՀՈԳԵՎՈՐ-ԿՐՈՆԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ**

Աշուղական երգարվեստում մինչև 19-րդ դ. բարոյա-խրատական, պատմական, սոցիալական, կրոնական, երգիծական, կենցաղային թեմաներն ու մոտիվները եղել են պարտադիր⁸⁰ :

⁷⁸ ԱՋԱԵ, էջ 135:

⁷⁹ Նույն տեղում, էջ 354:

⁸⁰ Հայ նոր գրականության պատմություն, հ. III, Երևան, 1962, էջ 253:

Հասարակական, քաղաքական ու տնտեսական նոր հարաբերությունները բերում են նոր թեմաներ ու մոտիվներ, հենրի՝ ավանդականի նկատմամբ նոր մոտեցումներ ու արժևորումներ: Ջիվանին ամբողջացնում ու քաղաքացիության իրավունք է տալիս իր անմիջական նախորդների արծարծած թեմաներին ու մոտիվներին, այդ թվում՝ Աստվածայինի, հավատի, հայ եկեղեցու թեման ու մոտիվները Ջիվանու մի շարք երգերում բացահայտվում են միստիկական (չենք կարող խոսափել այս բնորոշումից), փիլիսոփայական ու բարոյական առումներով՝ խորքում պահպանելով ազգային-հոգեբանական հիմքը:

«Աշուղ Ջիվանին յուր ոչ մի երգը դատարկ տեղը չէ հորինել, այլ մի պատճառ է ունեցել. մի պահանջ, մի բողոք կյանքի փոփոխվող պայմաններից», գրում է Ջիվանու որդին⁸¹ : Այս հիմնադրույթից կարելի է եզրակացնել, որ Աստծուն ու Աստվածայինին, դավանանքին ու եկեղեցուն նվիրված նրա երգերը ևս ունեցել են իրենց պատճառները: Եվ հիրավի, այդպես է: Կրոնի, Աստծո վերաբերյալ երգերի ստեղծման խթանը նրա՝ ճշմարիտ քրիստոնյայի էությունն է, նրա պատկերացումները, հույսերի ու սպասումների գաղափարատիպը: Ջիվանին ընդունում է Աստծո գոյությունը՝ որպես գերագույն, կատարյալ, ամոքիչ ու մխիթարիչ ամենակարող էակի: Միայն Աստված է ի զորու բարեփոխել մարդու կյանքը, երջանկություն ու հաջողություն պարգևել նրան, ազատել մեղքերից, շնորհել նրան հոգու խաղաղություն, սեր, հաշտեցնել իր խղճի հետ:

Այսպիսով, Ջիվանու սիրային, ժողովրդական թեմաների մշակմանը վերաբերվող, ինչպես և ազգային-ազատագրական պայքարի ու 1905-1907թթ. ինքնապաշտպանական մարտերին նվիրված ստեղծագործությունների կողքին որոշակի թիվ են կազմում հոգևոր-եկեղեցական և խրատա-բարոյական թեմաներով գրված ստեղծագործությունները: Ջիվանու կրոնա-եկեղեցական թեմաներով գործերն բաժանվում են երեք խմբի:

ա. Հայոց եկեղեցուն, հայոց սրբերին ու հայրապետներին նվիրված ստեղծագործություններ:

բ. Դավանական հանդուրժողականության, ինչպես նաև հայոց հավատն ու ավանդույթները և ծեսերը ամուր պահելուն նվիրված գործեր:

գ. Առ Աստված ուղղված, ինչպես նաև կրոնաբարոյական թեմաներով գրված բանաստեղծություններ:

Աշուղական գրականությունում, ինչպես նշում է Լևոնյանը, սիրո թեմայից հետո երկրորդ տեղն են գրավում կրոնա-բարոյական բնույթի ստեղծագործությունները⁸² :

Լևոնյանը որոշակի խմբավորմամբ ներկայացնելով այն թեմաները, որոնցով գրել են աշուղները, բոլոր այդ թեմաների ստեղծագործական բարձրակետը համարում էր Ջիվանուն, ով թե՛ այդ ամենը արտահայտել է գրական նոր հայերենով և թե՛ նոր շրջանի մարդուն բնորոշ մտածողությամբ,

⁸¹ Լևոնյան Գ, Երկեր, էջ 38::

⁸² Լևոնյան Գ., Աշուղները և նրանց արվեստը, էջ 130:

ինչպես նաև ներկայացրել ազգային վերիմաստավորմամբ ու ազգային ճակատագրի հետ կապված⁸³ :

Զիվանին ևս այն գիտակցությունն ունի, որ աշուղը քահանայի նման պիտի խրատի, ուսուցանի: «Զրպարտիչը» բանաստեղծության մեջ քննադատելով նմաններին ասում է, որ թող Տերը նրանց վերացնի մեր միջից: Զրպարտիչներին համեմատում է Հուդայի հետ, քանի որ զրպարտությունը մատնության մի տեսակ է, ընդ որում մատնություն չգործած մեղքի համար, ինչպես որ Քրիստոս Հուդայից մատնվեց, և Տիրոջն ուղղված մեղադրանքները զրպարտություն էին: Կյանքը որդի նման ապականող զրպարտիչներին քննադատելով, Զիվանին միաժամանակ նշում է, որ դա հենց քահանայի կատարելիք գործն է, ում խոսքն ավելի ազդու կլինի, քան իրենը.

**Այդպիսյաց խրատ տալը քահանայից պարտքն է հատուկ,
Ի՞նչ կարող է բան շինել Զիվանու պես խեղճ երգիչը⁸⁴ :**

Զիվանու կրոնա-բարոյական թեմաներով գործերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Առ Աստված ուղղված աղոթքներ:
2. Բարոյախոսական բնույթի բանաստեղծություններ, որոնցում հորդորում է մեղք չգործել և հիշել Տիրոջ դատաստանը:
3. Կրոնական բնույթի ներանձնական խորհրդածություններ դրված աշուղական բանաստեղծության ձևի մեջ:
4. Ավետարանական թեմաներով բանաստեղծություններ:
5. Սուրբ Գրքի հետ տարված զուգահեռներ և համեմատություններ, որոնք կապված են կյանքի տարբեր երևույթների հետ, այդ թվում և ազգային կյանքի՝ իր ապրած ժամանակի որոշակի նշանակալից իրադարձությունների հետ:

Առաջին խմբի բանաստեղծությունները նորօրյա աղոթքներ են, որոնք այս գործերին բնորոշ ձևով Աստծուն ուղղված խնդրանք-հայցվածներ են, որոնցում փառաբանվում է Տիրոջ զորությունը և անձնական ու անանձնական խնդրանքներ են ուղղվում: Ներանձնական խնդրանքներն իսկ Զիվանին բարձրացնում է հասարակական հնչեղության աստիճանի, դրանց հաղորդելով ընդհանուր բարոյական և համամարդկային ուղղվածություն: Աշուղական բանաստեղծության մեջ քանի որ վերջին տան տողերը տվյալ գործի բարոյական եզրահանգումն են, որն առաջին դեմքով ասվում է տվյալ աշուղի կողմից համապատասխան վերաբերմունքով և ընդհանրացվածությամբ, ուստի աղոթական նման բանաստեղծությունները կառուցվածքային առումով ունեն այն յուրահատկությունը, որ վերջին տողերում աշուղը ուղղակիորեն դիմում է Աստծուն, խնդրելով կատարել իր հայցվածը և կամ էլ դարձյալ առաջին դեմքով փառաբանում է Աստծուն:

Ուղղակիորեն «Աղոթք» վերնագրված ևս երկու ստեղծագործություն ունի Զիվանին: Դրանցից առաջինը, որը գրվել է 1900թ., նա «երեսանկյալ աղաչում

⁸³ **Լևոնյան Գ**, Հայ աշուղներ, «Ազգագրական հանդես», գիրք X, էջ 131:

⁸⁴ **ԶԲ**, էջ 555:

է», որ Աստված իրեն փրկի վատ հարևանից և, ընդհանրապես, տարբեր տեսակի վատ մարդկանցից, որոնց համեմատում է Հուդայի հետ, ասելով, թե նրանք ևս մարդու համար մի աներևույթ դարան են լարում: Այստեղ հին աղերսալից աղոթքների զգացողությունը ստեղծվում է «Երեսանկյալ աղաչում եմ» խոսքերով⁸⁵: Հետաքրքիր է, որ Զիվանին ասում է, թե կիսով չափ ընկած, կիսով չափ խոնարհված է աղոթում: Գրելիս, սովորաբար, ասում են գետնամած կամ դեմքով գետնին խոնարհված: Զիվանին, սակայն, գրել է երեսանկյալ, որն միջանկյալ վիճակ է ներկայացնում, ըստ երևույթին, արտահայտելով իր իրական զգացողությունը և չի ցանկացել իրեն կեղծել՝ այլ պատկերներ ներկայացնելով:

Նույնանուն հաջորդ բանաստեղծությունը գրել է նախորդից երկու տարի անց: Այն սկսվում է Աստծուն տրված հետևյալ բնորոշմամբ.

**Միայն հզորներից հզոր, թաքավորաց թաքավոր Սուրբ,
Համայն ազգաց տիրապետող ահեղ, հուժկու ահավոր Սուրբ,
Տկարներու ապավենը, զորեղ ապաստանը Աստված,
Ուղարկե քու զորությունդ, ազատե ինձ, զորավոր սուրբ**⁸⁶:

Թագավոր, հզոր և սուրբ բառերի հաճախադեպ կրկնությունը այս չորս տողերում, ըստ երևույթին, պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ Զիվանին աստվածային փառաբանությունը ցանկացել է արտահայտել աստվածաշնչային «Տէր, Տէր զօրութեանց» խոսքերով և Հայոց եկեղեցում կատարվող «Երեքսրբյանի» միջոցով, որը ցույց է տալիս անցյալի գրական ժառանգությունը միահյուսելու վարպետությունը, ինչպես նաև նրա քաջաձանթությունը հայ եկեղեցական գրականությանը և ծեսին:

Քրիստոնեության, հավատի ու եկեղեցու հանդեպ աշուղի ունեցած վերաբերմունքի, գնահատության հիմքում ընկած է ազգային-հայկական դավանանքի գաղափարը: Հիրավի, Զիվանին ճշմարիտ քրիստոնյա է, հայ քրիստոնյա: Ժողովրդական ընկալմամբ՝ հայ քրիստոնյա անվանումով հայ առաքելական եկեղեցու դավանանքին հետևողներն առանձնացվել են, ի տարբերություն մնացած՝ ազգությամբ հայ, բայց այլ դավանանքի պատկանողներից, մի երևույթ, որը դիտվում էր նույնիսկ վերջին տասնամյակներում՝ մեծահասակների միջավայրում:

Հայ ժողովրդի ազգապահպանության կարևոր երեք գործոններից մեկը աշուղը համարում է հայ եկեղեցին.

**Ինքդ ես ապավենը ազգերուն թշվառ,
Վայելում են քո բարիքդ անսպառ.
Պահպանե Հայ եկեղեցին ուղղափառ,
Դուն ես եղել հիմնադիրը կանխավաղ**⁸⁷ :

Հայ ժողովրդի, հասարակ մարդկանց շրջապատում հատկապես ընդունված է եղել «հայի Աստված» հորջորջումը: Զիվանին ևս իր երգում օգտագործում է

⁸⁵ Նույն տեղում, էջ 749:

⁸⁶ ԱԶԱԵ, էջ 460:

⁸⁷ Նույն տեղում, էջ 551:

այն, օգնության կանչում մեր պապերի ու հայրերի Աստծուն: Միայն այն պարագայում Նա օգնության կհասնի, եթե մշտապես հիշես Նրան:

Քեզ կ'փրկե մշտապես առյուծներու ճիրաններից,

Ո՛վ Ջիվան, հորդ, պապիդ Աստվածը [հ]իշիր վաղեմի⁸⁸ :

Այստեղ Ջիվանին նկատի ունի առյուծների գբում գտնվող Դանիելի օրինակը, ինչպես նաև հնոցում ողջ մնացած երեք մանուկներին: «Հորդ, պապիդ Աստվածը» խոսքերը ևս ուղղակիորեն վերցված են երեք մանկանց օրհներգության «Տէր Աստուած, Աստուած հարցն մերոց» խոսքերից:

Ջիվանին իր վերաբերմունքը դրսևորում է երբեմն առարկայական, երբեմն խոհա-փիլիսոփայական մոտեցումներով, փորձում իմաստավորել իր մոտեցումները տիեզերական չափանիշներով: Կյանքի հարահոս ընթացքում ամեն ինչ անէանում ու փոշիանում է: Ստորև բերված թե՛ առաջին տողին և թե՛ ընդհանրապես ողջ բանաստեղծությանը համահունչ են «Սաղմոսաց գրքի» հետևյալ տողերը. «Մարդո՛ր որպէս խոտոյ են ատուք իւր.որպէս ծաղիկ վայրի՛ այնպէս ծաղկէ: Շնչի ի նմա հողմ՛ եւ ոչ է, եւ ոչ եւս երեւի տեղի նորա» (Սղմ. ՃԲ 15-16):

Ի՞նչ է մարդը աշխարհի մեջ՝ ծաղկի պես անցողական,

Եթե ունի մի բարի գործ, նա կը մնա հավիտյան⁸⁹ :

Աստվածաշնչային թեմաների վրա հիմնված բարոյախրատական ոճն այնքան հարազատ է Ջիվանուն, որ դրանով է նա արտահայտում անգամ իր ազգային-քաղաքական դիրքորոշումը: «Ես մի քաղցր ծայն լսեցի...» սկսվածքով գործում միանգամայն անսպասելի աշուղական լուծմամբ Տաս կույսերի առակի միջոցով Ջիվանին արձագանքել է Ռուսական առաջին հեղափոխության խռովահույզ օրերին ցարի 1905 թ. մարտի նշանավոր հրովարտակին: Վերջինս վերաբերում էր Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մինչ այդ ընդունված որոշումը չեղյալ հայտարարելուն:

Հայոց եկեղեցու դեմ այս ոտնձգությունը համազգային մի ընդվզում առաջ բերեց, որին, ինչպես նաև սկսված 1905-1907 թթ.ռուսական առաջին հեղափոխությանը Ջիվանին մինչ այդ ևս անդրադարձել էր, սակայն շատ ավելի զգուշությամբ: Այս բանաստեղծությունում արդեն անկեղծ խանդավառությամբ գովելով ցարական հրովարտակը, դրանով միաժամանակ ըստ էության քննադատում է նախորդող վիճակը, քանի որ եթե նոր հրովարտակը ուրախություն է պատճառում, ապա դրանից առաջ եղածը պետք է բողոք և ընդվզում պատճառած լիներ:

Ջիվանին հոգևոր մեծ խորհուրդ է գտնում այն իրողությունում, որ քաղցր ծայնը՝ ցարական որոշումը հնչել է մարտ ամսին՝ Մեծի Պահոց շրջանում, վերջինիս հոգևոր խորհրդին համահունչ ձևով խաղաղություն բերելով խռովահույզ հոգիներին: Այս հանգամանքը բանաստեղծորեն նա արտահայտում է վարպետորեն կատարված հանգընտրությամբ:

⁸⁸ Նույն տեղում, էջ 152:

⁸⁹ Նույն տեղում, էջ 476:

**Ես մի քաղցր ծայն լսեցի մարտի մեջը, մեծ պասին,
Օգտավետ ու դուրեկան նոր նվագը Կավկասին...⁹⁰:**

Հրովարտակի դրույթների ընդունելի պայման լինելը բանաստեղծորեն արտահայտվում է այն խոսքերով, թե «Վերանորոգիչ ծայնովը մենք նորոգվեցինք միասին»: Այսինքն ընթացող պայքարն ու քաղաքական գործընթացները հոգևոր շրջանակին վերաբերվող բառընտրությամբ են ներկայացված՝ Մեծի Պահոց շրջանի Ս. Հարության խորհրդով նորոգությամբ: Անգամ ցարն ու նրա հրովարտակն ընդունող հպատակները և խելամիտ գիջումը չընդունողները համեմատվում են ավետարանական առակի փեսայի ու հինգ իմաստուն և հինգ հիմար կույսերի հետ (Մտթ. ԻԵ 1-13):

Այս բանաստեղծության ներքո գրված է 1905 թ. ապրիլի 10-12, որը Հայոց եկեղեցու շարժական տոմարով այդ տարի հաջորդել է Ծաղկագարդին, ընկնելով Ս. Հարությանը նախորդող Ավագ շաբաթին: Եվ ահա տևական պահքին հաջորդող վերջին շրջանում՝ Ավագ շաբաթին Ջիվանին մի զուգահեռ է անցկացնում Պահքի տրտմության օրերի և Ս.Հարության ցնծության միջև, ասելով, թե բարի գործեր չկատարած մարդու համար կյանքը նման է պահքի տրտում օրերի շարանին, որովհետև նրա լամպում չկա բարի գործերի վառվող յուղը: Այնինչ բարի գործեր կատարածների համար մոտենում է Ս. Զատիկը:

Ջիվանին շուրջ կեսդարյա ստեղծագործական կյանքում հավատարիմ է մնացել իր դավանանքին, ճշմարիտ քրիստոնյայի, հայ քրիստոնյայի հավատին: Նրա գովերգած մարդը օժտված է բարոյական բարձր արժանիքներով, արդարամտությամբ, խղճմտանքով, մշտապես պատրաստ օգնելու իր նմանին:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԽՐԱՍԸ ՋԻՎԱՆՈՒ ՍԵՆՇԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Աշուղական բանաստեղծության ուսումնասիրման սկզբնավորման շրջանից շարունակ ընդգծվել է, որ սիրո երգերից հետո հաջորդ տեղը այս բնույթի ստեղծագործություններում գրվում են խրատները: Հայ աշուղական գրականության խորին գիտակ Գարեգին Լևոնյանը գրում է. «Եթե սերը աշուղի մի թևն է, խրատն ու քարոզը՝ մյուս: Այստեղ է նրա փիլիսոփայությունը, աշխարհայեցողությունը, կյանքից արված եզրակացությունը, խրատն ու դասը»⁹¹:

Մ. Աղայանը ևս աշուղական ստեղծագործություններում առանձնացնում է «այն տեսակի երգերն, որոնք մտքեր են, դատողություններ, եզրակացություններ՝ աշխարհի, կյանքի մասին: Այստեղ ևս խոշոր չափով հանդես է գալիս նրանց աշխարհայացքի ծավալը, դրսևորվում նրանց իմաստասիրության և մտքի խորության չափը»⁹²:

Կարծում ենք աշուղական գրականությունն է մեծապես պայմանավորել Աբովյանի «Վերքի» երկու բնորոշ հատկանիշները՝ խորին

⁹⁰ ԶԲ, էջ 98:

⁹¹ Լևոնյան Գ., Աշուղների մասին, «Ազգագրական հանդես», գիրք Գ, Թիֆլիս 1904, էջ 131:

⁹² Աղայան Մ, Հայ գուսանները և գուսանա-աշուղական արվեստը, էջ 15:

գագամունքայնությունը և ընթերցողին ուղղված խոսքի իրապես բացատրական-դաստիարակիչ բնույթը: Ղ. Աղայանի «Արություն և Մանվել» վեպում Արությունի միջոցով աշուղական գրականությանը բնորոշ երկու հատկանիշ է նշվում. առաջին՝ բացատրական-խրատական, և երկրորդ՝ գրեթե անընկալելի այլաբանությունը, կամ գաղտնագրված անհասկանալի աշուղական խաղերը: Աղայանի հերոսի համակրանքը, բնականաբար, խրատա-դաստիարակաչական գործերի կողմն է⁹³:

Ա. Ժողովրդական առածներից և առակներից եկող խրատներ

Աշուղական գրականությունը քանի որ ուղղակիորեն կապված է ժողովրդական ստեղծագործությունների հետ, ինչպես նաև ունի խրատաբարոյական ուղղվածություն, ուստի աշուղական երգերում մեծ տեղ են գրավում առած-ասացվածքները և առակները, որոնք միաժամանակ առավել պատկերավոր, խորն ու արտահայտիչ էին դարձնում աշուղական երգերը:

Ջիվանու՝ առածներին հաճախադեպ դիմելը պայմանավորված էր նաև ժամանակի ընդհանուր գրական հոսանքով, ժողովրդական ստեղծագործությունները արժևորելու և տեղ տալու ձգտմամբ: 19-րդ դարի երկրորդ կեսին պարբերական մամուլի էջերում և առանձին գրքերով հրատարակվում էին թե՛ առածներ և թե՛ կատարվում էր վերջիններիս վերլուծությունը տեսական և գրական արժևորմամբ:

Ջիվանու՝ առածներին ու առակներին դիմելը ստուգաբանվում է նաև ժողովրդական ստեղծագործությունները լիովին հայացնելու, հայերեն դարձնելու նրա գործունեության ընդհանուր համատեքստում: Ինչպես կտեսնենք հաջորդ գլխում, նույն այս նպատակով Ջիվանին հայերեն թարգմանեց ժողովրդի մեջ տարածված և պատմվող արևելյան մի շարք վիպերգեր: Նույն ձևով ժողովրդական միջավայրում թուրքերենով տարածված էին բազմաթիվ առածներ և առակներ, որոնք ժամանակի ընթացքում հայերենից թուրքերենի էին փոխադրվել թուրքախոս հայերի միջավայրում և ապա սկսել թուրքերեն ասվել:

Ժողովրդական բանարվեստի այդ գործերը վերստին հայերենով ասելու հարցը հայ մատենագրությունում, սկսած «Բազմավեպից», քանիցս արձարծվել է: Այդ առածների և առակների հայերեն համարժեքները Ջիվանին ներկայացնելով իր ստեղծագործությունների մեջ, մեծապես նպաստեց, որ դրանք տարածվեն հայերենով, որի հաջող իրականացման գործում քիչ դեր չխաղաց Ջիվանու ստեղծագործությունների երգելով ասվելը: Իսկ երգային ստեղծագործություններն, ինչպես հայտնի է, ավելի ուժեղ են տպավորվում և ավելի կայուն ու անփոփոխ են մնում, ինչպես որ «Սասնա ծռերում» առավել հնության դրոշմ են կրում հենց երգային հատվածները:

Ջիվանին իր խրատ-խորհուրդները հաստատելու համար հաճախ է դիմում ոչ միայն ավետարանական պատգամներին, այլ նաև նախնիների կողմից և բանաձևի բնույթ ստացած, իրենց մեջ խոր ճշմարտություն բովանդակող ասույթներին:

⁹³ Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հտ. Ա. Երևան, 1973, էջ 105:

**Առակախոս նախնի հեղինակները
Ինչ ասել են՝ իրավ արդար են ասել.
Քննելով մարդկանց նպատակները՝
Որին խելոք, որին հիմար են ասել ⁹⁴:**

Ջիվանին առաձները վկայակոչելիս օգտագործում է թե առած բառը և թե դրանք անվանում «Հարանց խոսքեր անգին» ⁹⁵:

Առաձները Ջիվանին օգտագործում է բանաստեղծական մեկնաբանությամբ կամ ստեղծագործության սկզբում, որով պայմանավորում է բանաստեղծական զարգացման ընթացքը և կամ էլ բերում է վերջին տնում, որում աշուղական բանաստեղծությունում կատարվում է աշուղի խրատ եզրահանգումը: Ուստի վերջին տնում բերված առաձները լիովին համընկնում են այդ տան աշուղական բանաստեղծության մեջ ունեցած գործառույթին: Առաձները հանդիպում են նաև բանաստեղծությունների մնացյալ տներում, ընդ որում երբեմն մի քանիսը:

«Անմիտ մարդ» գործում շեշտելով այն միտքը, որ հոգսի մասին մտածելը ցավին դարձան չի լինի և չպետք է շարունակ տխրել ու ողբալ, վերջին տնում աշուղը գրում է.

**Ջիվանի, պապական մի լավ առած կա,
Անտեղի լացողը անաչք կ'մնա,
Թե կարող ես, ինչ էլ պատահի՝ խնդա,
Լացը պատուհաս է, անմխիթար մարդ ⁹⁶:**

Այս տան վերջին երկու տողերը թեև մեծապես պայմանավորված են բանաստեղծության նախորդ ողջ ընթացքով, բայց և միաժամանակ մեկնաբանությունն են երկրորդ տողում բերված հիշյալ առածի:

Ջիվանու մոտ որպես առած, որպես իմաստուն խոսք բերված արտահայտությունների մեծ մասը հանդիպում են նաև Ա. Ղանալանյանի կազմած «Առաձանի» ժողովածուում, իսկ մի որոշ մասը մեզ չհաջողվեց գտնել այնտեղ, թեև դրանք ևս իրենց ժողովրդական շնչով որոշակիորեն կարելի է առած համարել: Այն խոսքերը, օրինակները, որոնք չեն հանդիպում Ղանալանյանի մոտ, ավելի քիչ ժողովրդական շունչ ունեն և ավելի են ծովված Ջիվանու խոսքին, թեև դրանք ևս բնորոշ են ժողովրդական մտածողությանը: Նման խոսքերը թեև Ջիվանին ինքը անվանում է առած, սակայն դրանք ավելի շատ գրական ծագում ունեն և գալիս են Աստվածաշնչի «Իմաստնության գրքից» և մի շարք այլ աղբյուրներից:

Որևէ առած եթե Ջիվանու մոտ բերված է բնագրային որոշակի տարբերություններով, այդ տարբերությունները կարող են ունենալ երեք բացատրություն: Առաջին՝ այդ տարբերակը վրիպել է Ղանալանյանի աչքից: Երկրորդ՝ այդ տարբերակը թեև որևէ տպագիր հրատարակությունում տեղ չի գտել, որ Ղանալանյանը այն օգտագործեր, սակայն ժողովրդական միջավայրում

⁹⁴ ՋՔ, էջ 623:

⁹⁵ ԱՋԱԵ, էջ 312:

⁹⁶ Նույն տեղում, էջ 339:

ասվել է և Ջիվանին է գրի առել: Երրորդ՝ Ղանալանյանի մոտ առկա տարբերակը կամ տարբերակները Ջիվանին ներկայացրել է գրական բանաստեղծական որոշակի մշակմամբ և փոփոխությամբ:

Աշուղական գրականության այլաբանություններին համահունչ է առակը և բոլոր աշուղներն էլ դիմել են առակավոր այլաբանությանը, այդ թվում և տաբեր առակների գրական մշակմանը: Ջիվանին ևս ունի մի քանի առակների գրական մշակումներ: Ինչպես առաժի դեպքում, այնպես էլ առակի ժանրին Ջիվանու դիմելը պայմանավորված էր ոչ միայն աշուղական բանաստեղծության ավանդույթով և նրա անձնական նախասիրություններով, այլև ժամանակի գրական ընդհանուր հոսանքով: 19-րդ դարի երկրորդ կեսից մեծ տարածում են ստանում հայ միջնադարյան առակների բնագրերի տարբեր հրատարակությունները, որոնց բարձրակետն էր դառնալու Ն. Մառի «Ժողովածոյք առակաց Վարդանայ» եռահատոր կապիտալ աշխատանքը⁹⁷: Միաժամանակ տարբեր առակներ են գրառվում ժողովրդական միջավայրից և հրատարակվում ժողովրդական ստեղծագործությունները և վերջիններիս գրական մշակումները ներկայացնող գործերում:

Ինչպես հայտնի է առակը խոսքի արտահայտման մի այնպիսի ձև է, որն ասելիքը բացատրում և ներկայացնում է բերվող առանձին օրինակի միջոցով կատարված ընդհանրացմամբ: Այսպիսով, առակը մի պատմություն և գրույց է, որից կատարվում է համապատասխան բարոյական եզրահանգում: Պայմանավորված այս հանգամանքով առակը երկմաս կառուցվածք ունի: Առաջին մասը որպես օրինակ ծառայող բուն պատմությունն է, իսկ երկրորդ մասը այդ պատմության բարոյաբանական ու այլաբանական բացատրությունը:

Ջիվանին աշուղական բանաստեղծության շրջանակում աշխատել է պահել այս կառուցվածքը: Առակներին դիմելիս փորձել է հնարավորինս կրճատել սյուժետային ընթացքը, երբեմն սյուժեն ներկայացնելով միախառնված բարոյական եզրահանգմանը: Առակներին դիմելիս կատարել է երկաստիճան բարոյա-այլաբանական եզրահանգում բանաստեղծական հետևյալ կառուցվածքով. առակ-առակի եզրահանգում-եզրահանգման վրա խարսխված բանաստեղծության հաջորդող ընթացք

Ինչպես որ առակների գլխավոր գործող անձը աղվեսն է՝ իր խորամանկությամբ, որի համար միջնադարյան առակագրքերը անվանվել են նաև «Աղվեսագիրք», այնպես էլ Ջիվանին է բանաստեղծական մշակման ենթարկել աղվեսի հետ կապված մի քանի առակներ, այդ թվում և նշանավոր «Աղվեսն ու ագռավը»: Անհրաժեշտ է նշել, որ նոր շրջանի թե եվրոպական ու ռուսական և թե հայ գրականության մեջ այն մի շարք մշակումների է ենթարկվել:

Ջիվանու մոտ աղվեսին վերաբերող հաջորդ պատմությունը ավելի շատ գրույց է, քան թե առակ: Ահա այս պատճառով այն չունի նաև խրատական եզրահանգում: Մշակումը նվիրված է աղվեսի ուփստավոր ձևանալով աքլորին

⁹⁷ Н.Я. Марр, Сборник притч Вардана, часть 1-3-ий, С. Петербург, 1894- 96 гг.:

տիրանալուն: Այն թեև ուղղակիորեն չկա «Աղվեսագրքում» և միջնադարյան առակներում, սակայն նույն մոտիվով մի քանի առակ-գրույցներ կան, թե ինչպես է ուխտավոր կամ բարեպաշտ հավատացյալ ձևացող աղվեսը փորձում տիրանալ աքլորին և հավերին: Այս մոտիվը տարածված է նաև նոր շրջանի գրական մշակումներում:

Ջիվանու մշակման մեջ աղվեսը ներկայանում է որպես ուխտավոր և այստեղ ի տարբերություն նախորդ մշակումների խաբում է աղվեսին: Ընդ որում, գործողությունները զարգանում են ոչ թե ծառի վրա գտնվող աղվեսի շուրջը, այլ ունեն զարգացող սյուժե: Ասվում է, որ երբ աղվեսը ցանկանում է կեղծ բարեկամությամբ մոտենալ հավերին, աքլորը չի թողնում և իսկույն հավաքելով հավերին ապաստանում է հավանոցում:

Աղվեսն այնուհետև իրեն սև է ներկում և սգացող ճգնավոր ներկայանում: Հաջորդ առավոտյան, երբ աքլորը հավերի հետ դարձյալ դուրս է գնում գյուղից, տեսնում է սևավորված աղվեսին և հարցնում, թե ինչ է եղել: Աղվեսն ասում է, թե իր հին մեղքերն է ապաշխարում և սգավոր է, որովհետև Երուսաղեմ ուխտի է գնում⁹⁸:

Դիմում է աքլորին, թե ելնենք սարի լանջը, ուր հասած ցորենի արտեր կան: Աքլորը հավատում է նրան և գնում հետը: Այդ ժամանակ անձրև է սկսվում: Աղվեսն ասում է, թե մտիր այս ծակը, որ չթրջվես, որից հետո.

**Անձրևը սաստիկ տեղաց,
Աղվեսին հաստատ լվաց,
Նախկին գույնը ստացավ,
Խեղճ աքլորը սարսռաց:**

Բանաստեղծությունն այստեղ, ասես, անավարտ է մնում, թեև մտքով հասկանալի է, թե ինչ է լինելու պատմության վախճանը: Անավարտության զգացումը ստեղծվում է, որովհետև չկա այս պատմությունը եզրափակող բարոյական եզրահանգումը: Ի տարբերություն մյուս հեղինակների գործերի, այստեղ աքլորին եղերական վախճան է վերապահված՝ համահունչ Ջիվանու այն ըմբռնմանը, թե կեղծավոր և ստոր մարդիկ կարողանում են հասնել իրենց նպատակին:

Բ. Բարոյա-կրոնական խրատասացությունները

Ջիվանին ասվածին առավել խրատականություն հաղորդելու համար երբեմն միևնույն ստեղծագործությունում միաժամանակ օգտագործում է թե՛ ժողովրդական խոսքը և թե՛ սուրբգրային տողերն ու մտքերը: Այս առումով բնորոշ է հատկապես «Մտառու խոսգեր» ստեղծագործությունը: Մտառու բառը նա օգտագործել է «ի միտ առնել», մտքում առնել, մտքում պահել իմաստով: Յոթ բանաստեղծական քառատողերից բաղկացած խրատական պատմության ներքին զարգացումն ընթանում է իրար հաջորդող «մտառո» խոսքերով, որոնք

⁹⁸ ԱՋԱԵ, էջ 337:

ավարտվում են սուրբգրային վկայակոչմամբ: Իրար են հաջորդում այլաբանական իմաստ ունեցող պատկերները և կյանքից վերցված օրինակները:

Գ. Ազգային- հայրենասիրական ենթատեքստ ունեցող այլաբանությունները

Զիվանու խրատական-այլաբանական ստեղծագործությունների երրորդ խումբը կազմում են ազգային-հայրենասիրական ուղղվածություն ունեցող ստեղծագործությունները: Զիվանու այս թեմայով գործերի մասին Մ. Աղայանը գրում է, որ Զիվանին «հանդես եկավ որպես քաղաքացի, հասարակական մարդ և հայրենասեր: Նա որդեգրեց ճնշված ժողովուրդների ազատության գաղափարը ցարական և սուլթանական բռնակալությունից: Երգեց իր ժողովրդի ազգային ազատագրության ձգտումները, միևնույն ժամանակ քարոզեց աշխատավոր ժողովուրդների եղբայրությունը և խաղաղ համակեցությունը»⁹⁹:

Ուղղակիորեն հայրենիքին և հայոց լեզվին նվիրված բանաստեղծությունների կողքին այն ստեղծագործությունները, որոնցում արծարծվում են ազատասիրական գաղափարները, գրված են բանաստեղծական այլաբանության լեզվով: Ինչպես Ա. Սահակյանն է գրում. «Զիվանին առավել ևս, քան ուրիշ մեկը, ստեղծագործելիս դիմել է այլաբանության»¹⁰⁰:

Կ. Դուրգարյանը Զիվանու ստեղծագործություններում առկա ազգային այլաբանությամբ է բացատրում նրա ունեցած բացառիկ ժողովրդականությունը:¹⁰¹

Միջնադարից եկող և ժողովրդական լայն տարածում ունեցող այլաբանություններից էր վարդի և սոխակի (բլբուլի) սիրավեպը: Զիվանին իր լրումին հասցրեց այս այլաբանության ազգային վերիմաստավորման ընթացքը:

Այն արևելյան սիրերգությունից միջնադարում վերածվեց քրիստոնեական այլաբանության երկու իրար փոխկապակցված իմաստով: Առաջինը որպես հոգու և մարմնի փոխհարաբերություն և երկրորդը՝ եկեղեցու ողբը պարտեզ-աշխարհում Քրիստոսի համբառնման համար:

Վարդի և բլբուլի հետ մի երրորդություն էր կազմում գարունը և այս թեմայով գրված միջնադարյան բանաստեղծությունները սկսվում էին գարնան գալու հիշատակությամբ: Ինչպես Կոստանդին Երզնկացին է գրում.

Ահա եղև պայծառ գարուն¹⁰²:

Համաբնույթ ստեղծագործություններից մեկը կրում է «Այս գարունն զգալուստն Քրիստոսի պատմել առակօք» խորագիրը¹⁰³:

Սկսած միջնադարից, սակայն, այգի-պարտեզը ընկալվել է որպես հայրենիքի կորուսյալ դրախտ, մանավանդ որ դրախտն ունի պարտեզ իմաստը: Ավերված

⁹⁹ Աղայան Մ, Հայ գուսանները և գուսանա-աշուղական արվեստը, էջ 12:

¹⁰⁰ Սահակյան Մ., Հայրենաշունչ քնար, էջ 260:

¹⁰¹ Շիրակի հայ աշուղները, կազմեց Կ. Դուրգարյանը, էջ 10:

¹⁰² Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխտ. Ա. Սրապյանի, Երևան, 1962, էջ 134:

¹⁰³ Նույն տեղում:

պարտեզում վարդին կանչող սոխակի տվայտանքն սկսվել է ընկալվել որպես ողբ հայրենիքի վիճակի համար: Գրիգորիս Աղթամարցու ստեղծագործությունների առիթով Մ. Ավդալբեկյանը գրում է, թե նրա գործերում «հայրենիքն էլ մի լքված ու անհավք պարտեզ է, ուր չի լսվում բլբուլի կանչը»¹⁰⁴ :

Պարիսպն նորոգի եւ ի մէջն բըրբայ¹⁰⁵:

Այս նույն համատեքստում են ստուգաբանվում նաև Ջիվանու այգու, այգեպանի և այգու ծառերի մասին գրվածքները, որոնք ժողովուրդը համանման ձևով գիտակցված ու ենթագիտակցորեն երգել է որպես ժամանակի իրականության դեմ ազգային ընդվզման արտահայտություն:

Ինչպես որ վարդի ու սոխակի սիրավեպն է այլաբանական տարբեր երանգներ ստացել, այնպես էլ Ջիվանու արտաքուստ սիրային թեմաներով գործերում աշուղը դիմում է ոչ թե սիրած էակին, այլ Հայաստանին՝ սիրային այլաբանությամբ ներկայացնելով Հայրենիքի ազատության մասին իր ասելիքը: Բնորոշ օրինակներից է «Քո փափագով վառվում եմ, արի, սիրական ուրտեղ ես» սկսվածքով բանաստեղծությունը:

Այստեղ «սիրականը» ներկայացվում է որպես «երկնային ամպերու մեջ նստող ծիածան»: Միջնադարյան ստեղծագործություններում բլբուլը կանչում էր աներևույթ եղած վարդին: Այստեղ նույն կերպ բանաստեղծն է ցանկանում տեսնել աներևույթ եղած իր սիրած էակին.

Եկ, երևույթ տեսանեմ, ազնիվ սիրական, ու՛րտեղ ես¹⁰⁶:

Ակնհայտ է, որ սիրած էակին Ջիվանին չէր դիմի հետևյալ ոճով.

**Ի՞նչ պատահավ, անուշիկ, որ դու հեռացար ինձանից,
Քաղցրախոս, անուշ լեզու, անվամբ գովական, ո՛ւր տեղ ես,
Քա՞նի մեկ, քա՞նի չարաչար տանջըվիմ այլոց ձեռքով,
Ով վեհապանձ անվանի, կյանքիս պահապան, ո՛ւր տեղ ես:**

Վերջին տան առաջին տողով արդեն հստակվում է, որ բանաստեղծը դիմում է օտարի կողմից խլված հայրենիքին.

Մեր սիրո վայելչական տեղերն ուրիշ մարդիկ առան...

Սիրային քնարերգության տեսանկյունից միանգամայն անսովոր է նաև «Ով սիրուն, սիրուն» բանաստեղծությունը, որի առաջին երկու տողերից արդեն զգացվում է որ այն ոչ թե սիրած էակին, այլ հայրենիքին է նվիրված.

**Աշխարհն ընդհանուր քու սիրույդ համար քաշում է փափագ,
ով սիրուն, սիրուն,**

Չի լինիլ քեզ պես ամենայն երկիր փայլուն արուսյակ,

«Կուզան ու կերթան» երգը, որը ժողովրդի մեջ հայտնի է «Ձախորդ օրերը» վերնագրով, Ջիվանին գրել է 1892 թ.: Այդ ժամանակ աշուղը արդեն կենսափորձով իմաստնացած ստեղծագործող էր: Երգում արտահայտած կյանքի տարբեր երևույթների նրա բացահայտումները ինչպես որ բխում էին հիրավի

¹⁰⁴ Գրիգորիս Աղթամարցի, աշխտ. Մ. Ավդալբեկյան, Երևան, 1963, էջ 66::

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 88:

¹⁰⁶ ՋԲ, էջ 441:

անաչառ դիտարկումներից և հաստատուն ու աներեր էին, այնպես էլ հետագայում հորինված ստեղծագործություններում մնացին իբրև կայուն եզրահանգումներ:

Ջիվանու փիլիսոփայությունից են բխում կյանքի վերաբերյալ այն ընդհանրացումները, որոնց հանգում է աշուղը իր երգերում:

Ջիվանին հարազատորեն շարունակելով հայ միջնադարյան կրոնա-խոհական բանաստեղծությունից աշուղական երգերին փոխանցված խրատական գիծը, միաժամանակ այն հարստացնում է երկու նոր կարևոր մոտիվներով: Առաջին՝ մարդկային և համամարդկային բնույթի ավանդական խրատները հավելում և հարստացնում է այն մոտիվներով, որոնք բնորոշ էին ժամանակի մարդուն և դարաշրջանի համամարդկային իդեալներին: Երկրորդ՝ առանձին անհատին, մարդուն ուղղված խրատներին միահյուսում է ժամանակի ազգային-քաղաքական մտահոգությունները՝ իր խոհական խոսքին հաղորդելով շեշտված ազգային-հայրենասիրական ուղղվածություն, որով Ջիվանու երգը ծառայում է թե՛ անհատի բարոյական կատարելագործմանը և թե՛ ազգային ինքնագիտակցության վերելքին:

ԳԼՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՐԴ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԻՐԱՎԵՊԵՐԻ ՋԻՎԱՆԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԸ

Ա. «Աշուղ Ղարիբ» տարբերակները և Ջիվանու մշակումը

Ջիվանու կարևոր ծառայություններից մեկը հայ բանավեստին և մեր ժողովրդին, աշուղական ստեղծագործությունների հայերենին անցման գործընթացն իր ավարտին հասցնելը և աշուղական չափաձոն դեպ հայ դասական բանաստեղծության հունը ուղղելն էր:

Ջիվանուն, սակայն վիճակված էր նաև մեկ այլ կարևոր առաքելություն՝ հայերենով ներկայացնել ընդհանուր արևելյան, այդ թվում և հայկական ծագում ունեցող «Աշուղ Ղարիբ», «Մելիք Շահ», «Ասլի և Քյարամ» սիրավեպերը, ինչպես նաև նույն արևելյան մոտիվների հետևողությամբ գրել «Արշալույս և Լուսաբերիկ» ու «Ամսան և Ջեյջան» հեթախոսերը: Այս վեց ստեղծագործությունները ժամանակին բավականին տարածում գտան հայկական միջավայրում:

Անհրաժեշտ է նշել, որ Ջիվանու կատարած փոխադրությունները և արևելյան մոտիվներով գրելը ստուգաբանվում է 19-րդ դարի երկրորդ կեսի հայ աշուղական գրականության շրջանակում:

Ջիվանու կողմից արևելյան սիրավեպերի և հեթախոսերի երգվող հատվածների մեղեդիները պահելով այդ ստեղծագործությունները հայերեն ներկայացնելու մասին Գ. Լևոնյանը գրում է. «Ջիվանին, հայերեն լեզվի վերածեց ժողովրդի սիրած, մանավանդ գյուղական հասարակության մեջ ավելի, նոցա սիրելի հեթախոսերը-«Աշղը Ղարիբ», «Քյարամն ու Ասլին», «Շահ- Իսմայիլը» և այլն: Այն երգասեր, վիպասեր հայը, որ անգիր էր անում ու առանց լավ հասկանալու երգում թուրքերեն աղճատված ու կցկտուր երգերը, ահա տեսավ

յուր սիրած բոլոր եղանակների համար պատրաստի, այն ևս տպագրված հայերեն երգեր... Գյուղական մեջլիսներում, հողաներում, քաղաքային խնջույքներում այսպես մտավ հայերենը և վերացավ թուրքերենը»¹⁰⁷ :

1850-ական թվականներից արևելյան մի շարք սիրավեպերի և աշուղական պատմվող հեքիաթների հայացումը միայն ազգային ինքնագիտակցության վերելքով և ժողովրդի սիրված ստեղծագործությունները հայերենով ներկայացնելու ձգտմամբ չէ, որ պայմանավորված էր: Գրական այս շարժումը կարելի է անվանել նաև «Դարձ ի շրջանս իր», քանի որ հիշյալ ստեղծագործությունները իրենց ակունքում նաև հայկական հիմքեր են ունեցել և պատմական աննպաստ պայմանների պատճառով հայերեն գուսանական երգերին ուշ միջնադարում փոխարինած աշուղական՝ աստիճանաբար թուրքերենով ասվող երգերում է, որ հայերեն նախօրինակները աստիճանաբար թուրքերենով են դարձել:

Արևելյան սիրավեպերից հայկական միջավայրում տարածված և սիրված են եղել հատկապես «Քյոո Օղլին» և «Աշըղ Ղարիբը», որոնցից երկրորդը հայերենի փոխադրելով գրական մշակման է ենթարկել Ջիվանին: Այս ստեղծագործության Ջիվանու մշակման տիտղոսաթերթին գրված է. «Աշըղ Ղարիբի հեքիաթը հանդերձ երգերով. փոխադրության տաճկերէնից, աշխատասիրեց Աշըղ Ջիվանի»:

Աշուղական ստեղծագործություններին բնորոշ ձևով պատմության շարադրանքն ընդմիջարկվում է երգային հատվածներով: Ջիվանին գրում է, որ այն փոխադրություն է տաճկերենից՝ թուրքերենից: Ինչպես վկայում են փաստերը, այն ոչ միայն տարածված ու սիրված է եղել հայկական միջավայրում, այլև ունեցել է հայկական տարբերակը, որի մասին որպես ականատես-ունկնդիր Գ. Լևոնյանը գրում է. «Անցյալներում Ս. Էջմիածնում մեզ պատահեցին Ջանգեզուրի երկու աշուղ-եղբայրներ, որ Ղազարապատի պատի տակ, հրապարակում, բազմաթիվ ուխտավորների բոլորածն շրջանում պատմում էին աշըղ Ղարիբի հեքիաթը: Մի եղբայրը պատմում էր արձակ տեղերը, մյուսը երգում էր երգերը, իսկ երբ հարց ու պատասխանով երգերին էին հասնում՝ երգում էին փոխ ընդ փոխ»¹⁰⁸ :

Ճիշտ նույն կառուցվածքն ունի նաև Ջիվանու մշակումը՝ բուն բնագրային պատումը, երգվող հատվածները և երկխոսության կամ աշուղական մրցության ասվող երգային հատվածները:

Ջիվանին իր համար համեստորեն գրում է «աշխատասիրեց»: Իրականում նա ինքնուրույն մի նոր ստեղծագործություն է գրել՝ առկա պատմության հիմքի վրա և լիովին կարող է որպես հեղինակ հանդես գալ:

Ասվածն առավել ցայտուն է երևում, երբ Ջիվանու մշակումը համեմատում ենք նախորդող շրջանի մշակումների և ժողովրդական տարբերակների հետ:

¹⁰⁷ Գ. Լևոնյան, Երկեր, 1963, էջ 35:

¹⁰⁸ Գ. Լևոնյան, Աշուղների մասին, Պատմա-քննական հայացք, «Ազգագրական հանդես», գիրք X, 1903, էջ 91:

Ասվում է, որ Աշուղ Ղարիբը՝ սկզբնական անվամբ Ռասուլ կամ Ռաշիդ, Թավրիզի հարուստ վաճառականներից մեկի տղան է լինում: Հոր մահանալուց հետո նա տեղի մի խումբ խաբեբաների ազդեցությամբ տարբեր խրախճանքներում կորցնում է հայրական ժառանգությունը: Խորին հուսահատության մեջ մի օր հոր գերեզմանի վրա ողբալուց հետո քնում է և երազում հայտնված սուրբը գինի է տալիս, որը խմելով սիրահարվում է սրբի ցուց տված աղջկան: Նույն ձևով Սուրբը երևում է նույն այդ աղջկան, ում անունը Շահ Սանամ էր և ապրում էր Թիֆլիսում և դուստրն էր տեղի հարուստ վաճառականներից Բահրամ Բեկի: Աղջկան էլ ասում է, թե նա սիրելու է Ղարիբին:

Վերջինս արթնանալով ձեռք է բերում աշուղական շնորհ և մոր ու քրոջ հետ գնում Թիֆլիս՝ գտնելու սիրած աղջկան: Նրա հայրը լսում է Ղարիբի երգերը և հավանում: Իմանալով, սակայն, որ աշուղը ցանկանում է ամուսնանալ իր աղջկա հետ, պայման է դնում, որ գնա և յոթ տարի աշխատի օտարության մեջ, ձեռք բերի որոշակի կարողություն, որից հետո նոր ամուսնանա իր դստեր հետ:

Աշուղական արվեստով նա Հալեպում որոշակի կարողություն է ձեռք բերում: Այդ ընթացքում աննկատելիորեն անցնում են յոթ տարիները: Թիֆլիսում կարծում են, որ Ղարիբը մահացել է: Նրա մայրը վշտից և արտասվելուց կուրանում է, իսկ Շահսանամին բռնությամբ ցանկանում են ամուսնացնել: Վերջինս պայման էր դրել, որ Ղարիբին կսպասի նրա Թիֆլիսից հեռանալու օրվանից հետո ուղիղ յոթ տարի և նույն այդ օրը կամուսնանա:

Աշուղ Ղարիբն այս պայմանը հիշում է, երբ Շահսանամին ամուսնացնելուն մնացել էր ընդամենը մեկ օր: Սպիտակ ձիավորի ձիու թամբին նստելով՝ նա մեկ օրում հասնում է Թիֆլիս, գնում հարսանքատուն, ուր ընկերուհիներով շրջապատված հարսնացուն նստել էր՝ մի ձեռքում թույնով բաժակը, իսկ մյուսում՝ դաշյունը իրեն խփելու համար: Այստեղ Աշուղը երգում է: Աղջիկը ձայնից իսկույն ճանաչում է նրան և ամուսնանում են ու երկար տարիներ երջանիկ ապրում:

Այս պատմության մասին գրավոր առաջին հիշատակությունը գտնում ենք Սայաթ-Նովայի 1758թ.գրած տաղերից մեկում, որում ասվում է.

Օխտըն տարի էլ ման գուքամ սագըն ձիոխս Ղարիբի պես՝

Բուրթա Շահսանամըս դուն իս, էլ չունին օչուկ, աչկի լուս:

Ինչպես տեսնում ենք այստեղ բանաստեղծական խտացվածությամբ արտահայտվել է Աշուղ Ղարիբի յոթ տարի օտարության մեջ լինելը և որ նրա սիրած էակի անունը Շահսանամ է:

Հաջորդ գրառումը սիրավեպի Մ. Լերմոնտովի մշակումն է՝ կատարված 1837թ., որը հեղինակի կենդանության օրոք չի տպագրվել: Այն առաջին անգամ հրատարակել է Վ. Սոլոգուբը 1846թ. «Вчера и сегодня» գրքում: Լերմոնտովն այն վերնագրել է «Ашик-Кериб. Турецкая сказка»¹⁰⁹:

Լերմոնտովի մշակումն իրապես արձակ հեքիաթ է՝ առանց երգային հատվածների և աշուղական գրականությանը բնորոշ

¹⁰⁹ Андроников И., Исследования и находки – Ученый татарин Али, Москва, 1968, с. 392.

առանձնահատկությունների: Նա պատմությունը լսել է ոչ թե անմիջապես ասացողից, այլ այն վերապատմողից, որն՝ ըստ Իրակլի Անդրոնիկովի, եղել է Միրզա Ֆաթալի Ախունդովը (1812- 1878թթ.)¹¹⁰:

Այժմ ըստ ժամանակագրական ընթացքի ներկայացնենք հայկական գրառումները:

Լերմոնտովի կենդանության օրոք նրա կողմից «Աշուղ Ղարիբի» գրության շրջանում հայկական միջավայրում «Աշուղ Ղարիբի» մի տարբերակի մասին համառոտ գրում է Խաչատուր Աբովյանը 1840թ. «Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը» հոդվածում: Գերմաներեն գրված հոդվածը տպագրության համար նա ուղարկում է Պետերբուրգի կայսերական ակադեմիային: Այն, ցավոք, լույս չի տեսնում¹¹¹ :

Գ. Ավվերոյանը Սայաթ-Նովայի հիշյալ երկու տողերի բացատրության ժամանակ վերապատմում է «Աշուղ Ղարիբը»: Ավվերոյանի տարբերակը ևս որոշակիորեն նման է Աբովյանի պատմածին, որը հայկական ուրույն մի տարբերակի առկայության մասին ենթադրությունն ավելի իրական է դարձնում :

«Աշուղ Ղարիբի»՝ Ջիվանու մշակումից հետո 1892թ.լույս է տեսնում սիրավեպի թուրքական ընդարձակ տարբերակի ռուսերեն թարգմանությունը, որի մասին, ինչպես ասացինք նշվում է, թե այն իր արտացոլումն է գտել Լերմոնտովի մշակման մեջ:

Ջիվանին կատարել է «Աշուղ Ղարիբի» ամբողջական մշակումը, ուր գործողությունները սկսվում են Թավրիզում և ներկայացվում է Ղարիբի նախաաշուղական կյանքը, երբ նրան դեռևս ի վերուստ չէր տրվել աշուղական շնորհը:

Առանց Թավրիզի հատվածի և Ղարիբի սիրո նախապատմության ամբողջական սյուժեն թերի է մնում և վերածվում է երկու սիրահարների ավելի պարզ և կյանքում ընդունված պատմության: Այնինչ Ղարիբի պատմության հիմքում ընկած է Թավրիզում Աշուղի՝ իր նախաաշուղական կյանքում տեսած երազը:

Շամախիի տարբերակը գրվել է որպես աշուղական պատմություն, իսկ Ջիվանունը՝ որպես գրական մշակում, որոշակի վիպականություն ունի՝ առավել ընդարձակ և հետաքրքրաշարժ մանրամասներով: Ջիվանու մշակման աշուղական մասն արտահայտվում է Ղարիբի և մյուս հերոսների երգային հատվածներով, որոնք ունեն աշուղական բանաստեղծությանը բնորոշ հատկանիշներ, ինչպես նաև հանդես են գալիս աշուղային մրցումներին բնորոշ հատվածներով:

Այստեղ միայն ասենք, որ հայկական և Շամախիի տարբերակներում շնորհի տրամաբ է, որ այս պատմությունը մի նոր աստիճանի է բարձրանում, պարզ

¹¹⁰Հոդվածի գերմաներեն բնագիրը կից հայերեն թարգմանությամբ տե՛ս Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ 10 (լրացուցիչ), աշխտ. Պ. Հակոբյանի, Երևան, 1961, գերմաներեն բնագիրը էջ 99-104, հայերեն թարգմանությունը՝ էջ 105-110:

¹¹¹Աշուղ Ղարիբ, աշխտ. Շ. Գրիգորյանի, Երևան, 1994:

սիրահարությունից վերածվում նախասահմանված սիրո, որին հասնելու համար հերոսը տարբեր գրկանքներ պետք է կրի և կատարվող հրաշքի միջոցով հասնի իր սիրուն:

Այս դրվագով է նաև պարզ դառնում, որ Ղարիբը ոչ թե միայն պարզապես աշուղական վարպետություն ուներ, այլ վերին կամքով էր ստացել այդ շնորհը: Այս դրվագն էր, որ սիրո պատմությունը վերածում է սիրային վիպասքային հեքիաթի:

Ջիվանու տարբերակի այս յուրահատկությունն անկախ նրանից, թե որքանով է կապված նրա օգտագործած ժողովրդական տարբերակների հետ, ունի երկու կարևոր փաստագրական հիմք: Առաջինը՝ հայ միջնադարյան պանդխտության երգերն են, որոնք սկսվում են հայրենիքից հեռանալու պահից արտահայտվող մորմոքով: Ղարիբ բառը նշանակում է պանդուխտ: Հայրենիքից հեռանալու մորմոքը խորթ է եղել քոչվոր հարևաններին, ուստի Ղարիբի անունը և դեպ Հալեպ ճանապարհին նրա երգերը գալիս են հաստատելու այս սիրավեպի իր ակունքներում հայկական լինելը:

Կենսագրական ավելի մեծ հիմնավորում ունի երկրորդ պատճառը: Ղարիբի Թիֆլիսից դեպի Հալեպ ճանապարհը մինչև Էրզրում Ջիվանու համար հարազատ վայրերով էր անցնում՝ Ալեքսանդրապոլ, Շիրակի բնակավայրեր, Զավախք, ուր նրանց տոհմը եկել էր Էրզրումից մի քանի տասնամյակ առաջ: Ուստի այս ճանապարհի ամեն կայանին Ջիվանու հրաժեշտը՝ հրաժեշտի մի երգ էր Ալեքսանդրապոլից մինչև Զավախք և այնտեղից մինչև Էրզրում ընկած իր համար անչափ հարազատ բնակավայրերին:

Ջիվանու տարբերակի հայկականությունն արտահայտվել է նաև նրանով, որ Ղարիբը Էրզրումից Հալեպ է մեկնում «Երուսաղեմ գնացող ուխտավորների քարավանին խառնվելով»¹¹²:

Օտարության մեջ գտնվելու գլխավոր գործողությունների հենց Հալեպում կատարվելը ևս վկայում է սկզբնական տարբերակի հայկական ծագման մասին: Հալեպը ոչ միայն հայկական հարուստ պատմությամբ հին ու բազմամարդ համայնք ուներ, այլև հայ պանդուխտների գլխավոր կայանատեղիներից մեկն էր:

Նշանավոր «Կռունկ» երգում պանդուխտը կռունկին հարցնում է Հալեպ ես գնում թե՞ Բաղդադ:

Հալեպում Ղարիբի առաջին երգի առաջին տանը գտնում ենք կռունկի ու երամի հետ կապված այդ արձագանքը.

**Սրտիս մեջ գալով եռանդ,
Քեզ դիմեցի, Հալեպ քաղաք,
Ազգ ու երամ թողնելով անդ,
Քեզ դիմեցի, Հալեպ քաղաք**¹¹³ :

¹¹² Նույն տեղում, էջ 65:

¹¹³ Աբեղյան Մ., Հայ ժողովրդական հավատալիքները, Երկեր, հտ. է, Երևան, 1975, էջ 81-82:

Նաև պատահական չէ, որ Հալեպում Ղարիբի գործունեությունն ավելի մանրամասն է նկարագրված հենց Ջիվանու մոտ:

«Աշուղ Ղարիբ» սիրավեպի հայկական ակունքների և ձիավորի Սուրբ Սարգիսը լինելու օգտին են խոսում այս պատմության հայերեն այն տարբերակները, որոնք վերաբերում են ոչ թե ուղղակիորեն Աշուղ Ղարիբի պատմությանը, այլ Սուրբ Սարգսին, թե ինչպես է նա որպես մոլորված ճանապարհորդների արագահաս օգնական և սիրահարներին իրենց ցանկությանը հասցնող ըղձակատար սուրբ ձիավոր, Աշուղ Ղարիբին հասցնում անհրաժեշտ տեղը, որպեսզի չխախտվի նրա հետ կապված պայմանը:

Ս. Սարգսի պաշտամունքի մասին գրելիս Աբեղյանը վկայակոչում է Ղարիբի պատմությունը, որի Հալեպից Թիֆլիս փոխադրմանը վերաբերող մասի համար ասում է «Յոթ տարուց հետո չվերադառնամ, ապա դու ազատ ես և կարող ես ուրիշի հետ ամուսնանալ: Յոթ տարի անց՝ վերադարձին, նա ուշանում է, և վերջին օրը դեռ մի քանի օրվա ճանապարհ ունի անցնելու: Հուսահատության մեջ նա Սուրբ Սարգսին է կանչում: Վերջինս իսկույն հայտնվում է, նրան առնում իր ձիու գավակին ու ասում. «Աչքերդ փակի՛ր»: Նա փակում է աչքերը: Ապա նա մտքի պես արագ՝ սար ու ձորի վրայով սլանում է օդում և հետո անմիջապես ասում աշուղին. «Բա՛ց արա աչքերդ»: Նա բացում է աչքերը և իրեն տեսնում իր հայրենի քաղաքում ու այնուհետև ամուսնանում իր սիրած աղջկա հետ»¹¹⁴ :

Գրառված հայկական տարբերակների և մշակումների առաջին անգամ կատարվող դրվագ առ դրվագ քննությունը մեկ անգամ ևս վկայում է «Աշուղ Ղարիբի» ստեղծման հայկական նախօրինակի մասին, որի հիմքի վրա սիրավեպը հայ ժողովրդի համար աննպաստ պատմամշակութային պայմաններում աստիճանաբար ձեռք է բերել նախ արևելյան գունավորում, ապա և թուրքական բանավոր գրականությանը բնորոշ գծեր:

Շ. Գրիգորյանի դիպուկ բնորոշմամբ «ղարիբությունը» հատկանիշ է դարձել և առաջին հերթին հայերի համար է ասվել¹¹⁵ :

Սիրավեպի գործողությունները տեղի են ունենում ավանդաբար հայաշատ երեք կենտրոններում՝ Թավրիզ, Թիֆլիս և Հալեպ: Վերջինս նաև հայ պանդուխտների կենտրոններից մեկն էր:

Աշուղ Ղարիբի գնացած և եկած ճանապարհը հայկական լեռնաշխարհի մի մասն է, ընդ որում նաև Ջիվանու և իր նախնիների հայրենիքը՝ Շիրակ-Ջավախքով և Էրզրումով, որը ստեղծագործական լրացուցիչ մի մղում է դարձել այս տեղավայրերին նվիրված Ղարիբի երգերի համար:

Տեքստային հակադարձ քննությունը՝ Ջիվանու մշակումից դեպ ժողովրդական տարբերակները, վեր է հանում այս սիրավեպի հայկական ակունքները և Ջիվանու մեծագույն ծառայությունը մեր ժողովրդին և գրականությանը այն վերստին հայացնելն է: Նույնը վերաբերվում է նաև

¹¹⁴ Աշուղ Ղարիբ, աշխտ. Շ. Գրիգորյանի, Երևան, 1994:

¹¹⁵ Август Фон-Гакстаузен, Закавказский край, в 2-х частях, Ч. 2, СПб, 1857, стр. 53-54:

Արևելքի մեծագույն և դժբախտ սիրահարների շարքին պատկանող Ասլիի և Քյարամի սիրավեպին:

Բ. «Ասլի և Քյարամ» սիրավեպի Ջիվանու մշակումը

Աշուղ Ղարիբի Ջիվանու մշակման 1887թ. հրատարակությունից մեկ տարի անց՝ 1888թ. լույս է տեսնում Ասլիի և Քյարամի պատմության Ջիվանու մշակումը հետևյալ խորագրով. «Քեարամի եւ Ասլիի հէքեաթը հանդերձ երգերով. Փոխադրութիւն տաճկերէնից»:

Արվյանը ևս Աշուղ Ղարիբի ժողովրդական տարբերակից անմիջապես հետո բերում է Ասլիին և Քյարամին նվիրված պատմության գրառումը: Նույն ձևով տեսանք, որ Ջիվանին է Աշուղ Ղարիբից անմիջապես հետո գրական մշակման ենթարկել և մեկ տարի անց տպագրել այս սիրավեպը:

Կա նաև մեկ այլ օրինաչափություն: Սիրավեպի բոլոր գործողությունները թեև դարձյալ կատարվում են հայկական լեռնաշխարհում, ավելին հայկական սրբավայրերում և սերտորեն կապված են հայ եկեղեցական մի շարք հավատալիքների հետ: Ամենահին գրառումը հայկականն է՝ կատարված Արվյանի կողմից: Նա իր գրառած տարբերակը մի փոքր փոփոխությամբ ուղարկել է նաև Ավգուստ Ֆոն Հաքստհաուզենին, ով ազգագրական և բանահյուսական նյութեր էր հավաքում Անդրկովկասի հետ կապված¹¹⁶:

Պատմության ոչ ամբողջական մի տարբերակի հայերեն գրառման ռուսերեն թարգմանությունը լույս է տեսել «Сборник материалов» շարքի նույն 13-րդ այն հատորում, ուր գտնվում է նաև «Աշուղ Ղարիբի» ադրբեջանական թարգմանության ռուսերեն հրատարակությունը:

Թուրքական տարբերակի առաջին հրատարակությունը հայատառ թուրքերենով դարձյալ հայերեն են կատարել Կ. Պոլսում 1875թ.: Հայատառ թուրքերեն գրականությամբ ինչպես հայտնի է փորձ էր արվում դեպի ազգային արմատներ վերադարձնել արևմտահայության մայրենին կորցրած հատվածներին: Այս քաղաքականության շրջանակում տեսնում ենք հայ մշակութային գործիչների կողմից թեև ոչ փոխկապակցված, սակայն ծրագրված մի գործունեություն:

Սիրավեպի հիմքում ընկած է հայ քահանայի աղջկա և մահմեդական իշխանավորի (կամ մոլլայի) տղայի դժբախտ սիրո պատմությունը: Կրոնական տարբերությունից բացի կա նաև դասակարգային և սոցիալական հակադրությունը:

Ջիվանու մշակման մեջ ասվում է, որ թագուհին որոշում է մի պարտեզ կառուցել, ուր տնկում են նաև ծերունու տված երկու տնկիները: Իրավիճակի ողբերգականությունն ավելի շեշտելու համար ասվում է, որ մնացյալ տնկիների հետ երկուսը ևս տնկում են նորահիմն պարտեզում: Բոլոր տնկիները աճելով պտուղ են տալիս, բացի թագուհու և երեցկնոջ տնկածից:

¹¹⁶ Արևելյան սիրավեպեր, հտ. 2-րդ, Երևան, 2004, էջ 35:

Ինչպես «Աշուղ Ղարիբում», այստեղ ևս երկնային կամքով է ի սկզբանե կանխորոշվում նրանց իրար պատկանելը և սիրո հրով միմյանց համար այրվելը; Այն շատ ավելի ուժեղ է որպես ճակատագրի նախասահմանվածություն, քան թե միասին մեծացող երեխաների սերը չափահաս դառնալուց հետո:

Երազում թեև չի խոսվում թագածառանգին աշուղության շնորհի տրվելու մասին, սակայն, տղան այնուհետև ամենուր որպես աշուղ է հանդես գալիս և որպես թափառական աշուղ սկսում որոնել աղջկան:

Զիվանին արևելյան տարբերակին զուգահեռ գրում է, որ մի օր որսորդության ժամանակ գալով Ջանգի գյուղը, Միրզա Բեկը տների պարտեզներից մեկում տեսնում է աղջկան և իսկույն հասկանում, որ երազում նրան է տեսել: Աղջկան ասում է, որ այնուհետև իր անունը թող Քյարամ լինի և նրանը՝ Ասլի: Սա երազում նախասահմանվածի կատարումն էր նրանց առաջին հանդիպումից հետո:

Ժողովրդական պատմությանը համահունչ ձևով Զիվանին գրում է, որ աղջիկն սկսում է այրվել երկու կրակի միջև՝ մի կողմում սիրո կրակը և մյուսում՝ հավատը, որը հաղթում է սիրուն:

Թագավորն իմանալով որդու ցավը, քահանային պալատ է բերել տալիս և ասում, որ նա աղջկան պետք է ամուսնացնի իր որդու հետ: Երբ քահանան ասում է, թե իր աղջիկը քրիստոնյա է, թագավորը պահանջում է, որ նա մահմեդականություն ընդունի:

Քահանան ժամանակ շահելու և ելք որոնելու համար ասում է, որ իրեն հինգ ամիս է հարկավոր հարսանիքին նախապատրաստվելու համար:

Քահանան վերադառնալով գյուղ մի գիշեր ընտանիքով փախչում է այնտեղից: Նրանց հեռանալու նկարագրության մեջ արտահայտվել է հայ ժողովրդի գաղթականության դարավոր փորձառությունը: Զիվանին գրում է, որ գնալուց իրենց հետ վերցնում են այն իրերը, որոնց «գինը ծանր էր և քաշը՝ թեթև»:

Տարբեր երգերով դիմելով անցորդներին իմանում է, որ Ասլին ծնողների հետ Խոյ է գնացել: Այստեղ ասում են, որ Շուշի է գնացել: Ճանապարհին երգելով հարցուփորձ անելով անցորդներին Քյարամը գնում է քահանայի անցած ճանապարհով և հասնում Գանձակ: Ճանապարհին կռունկներ է տեսնում, որոնց դիմելով երգում է.

**Ձյունապատ սարերից թռչելով կանցնիս,
Կանգնի՛ր, կռունկ, կանգնի՛ր, քեզ բան հարցանեմ,
Արդյոք մեր կողմերից ի՞նչ լուր ունես,
Կանգնի՛ր, կռունկ, կանգնի՛ր, քեզ բան հարցանեմ:**

Այս տողերը զուգահեռ են գծում թե՛ նշանավոր «Կռունկ» երգի հետ և թե՛ Աշուղ Ղարիբի կռունկներին դիմելու համանուն տողերի հետ

Զիվանու մոտ առկա երգային հատվածները որքան էլ որ գրական մշակման ենթարկված ու վերախմբագրված լինեն, ինչպես «Աշուղ Ղարիբում», հիմնված են ժողովրդական տարբերակների վրա:

Ինչպես Արուսյանի գրառման մեջ է ասվում, որ Քյարամը սարեր ու ձորեր է ման գալիս Ասլիին որոնելու, այնպես էլ Ջիվանու մշակման մեջ է ասվում, թե տեղից տեղ անցնելով Քյարամը դիմում է Սիփան ու Նեմրուփ սարերին՝ երգային ձևերով արտահայտելով դրանց հետ կապված ավանդությունները:

Ջիվանու մշակման մեջ գործողություններն ընթանում են սյուժետային հետևյալ ընթացքով: Երբ պարզ է դառնում, որ ատամները հանելու պատրվակով եկածը Քյարամն է, քահանան դիմում է քաղաքի դատավորին, որ վերջինս ձերբակալի Քյարամին: Քահանայի տունն այս նպատակով հսկող պահապաններ են նշանակվում, և երբ Քյարամը գիշերով գալիս է փախցնելու սիրած աղջկան, պահապանները բռնում են տղային և բանտ տանում: Նա, սակայն, դատավորին կարողանում է գրավել իր երգի ուժով և վերջինս մահվան սպառնալիքով պարտադրում է քահանային, որ աղջկան ամուսնացնի Քյարամի հետ: Քահանան դարձյալ խաբեության դիմելով 5 օր է խնդրում հարսանիքին պատրաստվելու համար և դարձյալ փախչում է կնոջ ու աղջկա հետ:

Քահանան կնոջ և աղջկա հետ գնում է Հալեպ: Հանգրվանում է մի հայի տանը և պատմում իր հետ պատահածը, որ Քյարամը ամենուր փորձել է հասնել իրենց: Նրան օթևան տված հայն ասում է, որ հարկավոր է նշանել աղջկան: Քահանան՝ համամիտ լինելով, աղջկան նշանում է տեղի հայ վաճառականներից մեկի տղայի հետ: Ասլին թեև գիշեր ցերեկ լաց է լինում Քյարամի համար, սակայն ստիպված համաձայնում է: Այս դրվագը ևս մի ընդհանրություն է գծում Աշուղ Ղարիբի հետ:

Քյարամը հարսանիքի նախօրեին հասնում է Հալեպ և տեղի փաշային կարողանում է համոզել, որ խափանի բռնի ամուսնությունը: Հարսանեկան թափորը երբ դուրս է գալիս եկեղեցուց, Քյարամը երգով դիմում է Ասլիին, ապա նրան փաշայի պահապանները տանում են պալատ: Քահանան տեսնելով, որ անխուսափելի է սիրահար զույգի ամուսնությունը, դիմում է վերջին խորամանկությունը՝ կախարդական շապիկ պատրաստելուն:

Փաշայից մի քանի օր է խնդրում, որպես թե հարսանեկան պատշաճ օժիտ պատրաստելու համար: Քահանան աղջկան ասում է, որ ամուսնական առագաստ մտնելուց առաջ եթե չհագնի իր պատրաստած շապիկը, ապա իր հայրական օրհնությունը նրան չի տա: Աղջիկը համաձայնում է: Հարսանիքից հետո տղան սկսում է արձակել հագուստի կոճակները: Երբ մնում է երկու կոճակ, արձակված կոճակները նորից կոճկվում են: Մինչև առավոտ նա չարչարվում է, սակայն չի կարողանում արձակել բոլոր կոճակները:

Հալեպը հայկական ժողովրդական մտածողության մեջ կապվում է հեռավոր մի վայրի հետ: Երբ ցանկանում են ասել, թե խոսքը հեռվից է սկսում, ասում են թե Հալեպից է գալիս: «Սասնա Շոերում» Դավթի ուժեղ հարվածելու համար որպես չափազանցության գերադրական աստիճան ասվում է, որ գնաց Հալեպ և այնտեղից ձիով եկավ հարվածելու Մսրա Մելիքին:

Ջիվանին ավելի ողբերգականություն և հակադրություն հաղորդելու համար սիրավեպի դժբախտ ավարտին, կախարդական շապիկը ներկայացնում է

որպես հարսանեկան վառ կարմիր զգեստ, որն առավել գրավչություն է հաղորդում Ասլիին.

**Շատ գեղեցիկ հագնված է,
Պատկառում է, ամոթխած է,
Ձեռքեր, մատներ հինայած է,
Շառագույն կարմիր է հագել¹¹⁷ :**

Ջիվանու մշակման մեջ աշուղական երգին կախարդական զորություն է վերագրվում: Դժվարին տարբեր վիճակներ՝ մառախուղ, ավազակների կամ գայլերի հարձակում, գետանցում մոգականորեն հաղթահարվում են երգի միջոցով: Նույն ձևով Քյարամն Ասլիին ասում է, որ նրա հարսանեկան կարմիր զգեստի կոճակները կքանդի իր երգով: Մինչև առավոտ նա երգում է քառատողերով, որոնցից յուրաքանչյուրն ավարտվում էր հետևյալ տողով.

Բա՛ց, ո՛վ Ասլի, կրճքիդ այդ կոճակները:

Երգի ամեն տնից հետո կոճակները արձակվում են և նորից կոճկվում: Այստեղ է, որ գայլիս է սիրավեպի ողբերգական բարձրակետը և ավարտը՝ Քյարամի իր անկատար մնացած սիրո տենչանքից այրվելը:

Բավականին խոր իմաստ ունի և սիրահարների մոխրանալուց հետո իսկ իրար փարվելու ձգտումը արևելյան սիրավեպերի այն ըմբռնմամբ, որ երկրային կյանքից անմուրազ հեռացած սիրահարներն իրենց բաղձանքին են հասնում երկնային կյանքում:

Նման ըմբռնումն հստակորեն արտահայտվել է ժողովրդական տարբերակում: Վերջինիս ռուսերեն թարգմանության մեջ նրանց այրվելու մասին որպես եզրափակում ասվում է. «Но пепель их зато соединился вместе...»¹¹⁸ :

Ժողովրդական տարբերակը և Ջիվանու մշակումն այն յուրահատկությունն ունեն, որ սիրավեպի երգային հատվածները ոչ միայն հերոսների զգացմունքներն են արտահայտում, այլև կանխորոշում դեպքերի զարգացման հետագա ընթացքը:

Ջիվանին ոչ միայն հայ դասական բանաստեղծության հունն ուղղեց աշուղական երգերը, այլև հայկականացրեց ու գրական մշակումներով ներկայացրեց Արևելյան սիրավեպերը, որոնց երգային հատվածները մեծ տարածում գտան ժողովրդական միջավայրում:

Հեքիաթի և սիրավեպի միջև միջանկյալ տեղ գրավող այդ ստեղծագործությունների գրական մշակմամբ Ջիվանին դրանց աշխատեց հաղորդել ավելի բարոյա-խրատական և դաստիարակչական ուղղություն: Հանելով արևելյան մի շարք անպատշաճ տեսարանները, թողեց արկածային ու սիրահարական գեղեցիկ ու գրավիչ դրվագները, արևելյան վառ գույները:

Շնորհիվ Ջիվանու, այս ստեղծագործությունները հայ ընթերցողի համար ձեռք բերեցին նաև հայրենագիտական-ճանաչողական նշանակություն, քանի որ սիրահար հերոսների դեգերման և սիրված էականն որոնելու ճանապարհները

¹¹⁷ Նույն տեղում, էջ 160:

¹¹⁸ Сборник материалов, вып. XIII , стр. 128:

անցնում էին հայկական լեռնաշխարհով, որի պատմական հիշատակները և ավանդությունները Զիվանին վարպետորեն միահյուսեց իր ստեղծագործություններին:

Հայ աշուղական երգարվեստի ավանդները շարունակող բանաստեղծը կարողացավ վեր հանել այդ ստեղծագործությունների սկզբնական հայկական միջուկը, որը տարբեր ձևափոխումներ և հավելումներ էր կրել արևելյան միջավայրում: Հիշյալ սիրավեպերի ժողովրդական երգերը առանձնակի տարածում գտան հայկական միջավայրում՝ ժողովրդական հիշողության մեջ նիրհող մոտիվների ու մեղեդիների վերակենսավորմամբ:

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զիվանու կյանքի ընթացքի և նրա ստեղծագործությունների զուգադիր քննությունը ցույց է տալիս, որ մի շարք ստեղծագործություններում արտացոլվել են ոչ միայն ժամանակը, նշանակալից դեպքերը և հասարակական տրամադրությունները, այլև իր կյանքի զանազան դրվագները, որոնց միջոցով ճշտվում են թե՛ տարբեր գործերի գրության հետ կապված մի շարք հանգամանքներ, թե՛ նրա գրածները կարելի է համարել իր կենսագրության գլխավոր սկզբնաղբյուրը: Այս հանգամանքը բնորոշ է ընդհանրապես աշուղական բանաստեղծությանը, այդ թվում և Սայաթ-Նովային:

2. Զիվանին պատմա-հայրենասիրական թեմաներով բանաստեղծություններով ընդլայնեց ու մի նոր աստիճանի հասցրեց աշուղական երգերի հայրենասիրական թեմատիկան: Իր ստեղծագործություններով նա ևս ժամանակի ազատագրական գաղափարներին արծազանքեց Հայոց անցյալի փառքի ոգեկոչմամբ, որն օրինակ էր ծառայելու ժամանակակիցների համար:

3. Զիվանին համահունչ ժամանակաշրջանի պահանջին, խախտելով աշուղական երգի արևելյան ավանդական կանոնները, ընդլայնեց թեմատիկ սահմանները, մոտիվները և հանդես եկավ ոչ միայն որպես սիրո, բարոյախոս-խրատատու երգիչ, այլ հրապարակախոս, ուսուցիչ, ազատագրական պայքարի երգիչ:

4. Պայմանավորված ժամանակի ազատագրական ըմբռնումներով և Հայկական հարցի միջազգային արձարձմամբ Զիվանու հորինած երգերում մեծ թիվ են կազմում հայրենասիրական, հայրենապաշտական ու ազատագրական պայքարի ստեղծագործությունները:

5. Հայության հուսախաբությունները, հիասթափությունը եվրոպական պետությունների երկդիմի վերաբերմունքից Զիվանին արտահայտում է աշուղական այլաբանության և տարբեր համեմատությունների միջոցով: Միաժամանակ, աշուղական բանաստեղծությանը բնորոշ խրատականությամբ նա հորդորում է ազգային միասնականության, համախմբման, երկրի ու ժողովրդի ուժեղացման, որպեսզի հայության հետ հաշվի նստեն մեծ տերությունները:

6. Ժամանակի հասարակական կյանքին, հաստատված նոր արտադրական հարաբերություններին և դրանց առաջ բերած հեղաբեկումներին

անդրադառնալով, բանաստեղծորեն իր մտահոգություններն ու վերաբերմունքն արտահայտելով՝ Ջիվանին աշուղական բանաստեղծության վերջին փուլը նշանավորում և հարստացնում է նաև քաղաքացիական շնչով գրված ստեղծագործություններով:

7. Ջիվանին՝ հարազատորեն շարունակելով հայ միջնադարյան կրոնա-խոհական բանաստեղծությունից աշուղական երգերին փոխանցված խրատական գիծը, միաժամանակ հարստացնում է այնպիսի նոր մոտիվներով, որոնք բնորոշ էին ժամանակի մարդուն և դարաշրջանի համամարդկային իդեալներին: Նաև խրատներին միահյուսում է ժամանակի ազգային-քաղաքական մտահոգությունները՝ իր խոհական խոսքին հաղորդելով շեշտված ազգային-հայրենասիրական ուղղվածություն, որով Ջիվանու երգը ծառայում է թե՛ անհատի բարոյական կատարելագործմանը և թե՛ ազգային ինքնագիտակցության վերելքին:

8. Հայաստանը աշուղի երգերում մարմնավորվում է ծերացած, բոլորից լքված, վշտահար մոր կերպարով, նաև պտղատու ծառերով հարուստ, բայց ավերված, ոտնակոխ արված պարտեզի տեսքով: Ջիվանու երգերում այդ կերպարը մնաց մինչև նրա կյանքի ավարտը:

9. Աշուղ-բանաստեղծը հայրենի երկրի դժբախտ ճակատագրի պատճառը համարում է պանդխտությունը, օտար ավերում հաջողություն փնտրելու, հարստանալու ցանկությունը: Նա ցույց է տալիս, որ գաղթականը չի կարողանում վայելել իր աշխատանքի արդյունքը: Միակ լավ վայրը հայրենիքն է, հայրենի հողը մշակել, պաշտպանելն է: Եվ պաշտպանել միավորվելով, զինվելով, սեփական ուժերով:

10. 1900-ականներին երևոյթներն իրենց անունով կոչելուց զատ, Ջիվանին լայնորեն օգտագործում էր խորհրդանիշներ կենդանական ու բուսական աշխարհից՝ ելնելով երկուստեք վարքագծի նմանությունից (ծիրանի ծառ, եղնիկ, այծյամ, կռունկ, լոր):

Ջիվանին բանաստեղծորեն դիմում է գեղարվեստական այն հնարին, որով մարդկանց էությունը բխեցվում և ստուգաբանվում էր նրանց ազգանվան միջոցով, ինչպես, օրինակ՝ Գոլիցին՝ գայլ և ցին:

11. Ջիվանին դառնությամբ ու հիասթափությամբ արձագանքեց Կովկասում ծայր առած հայ-թաթարական արյունոտ ընդհարումներին: Նրա բանաստեղծական աշխարհում ներկայացված են ինքնապաշտպանության համբավավոր ֆիդայիներն ու նորօրյա հերոսները, շնորհիվ որոնց Անդրկովկասի հայությունը կարողացավ ինքնապաշտպանական կռիվներ մղել:

12. Ջիվանին պաշտամունքի հասնող սեր է ունեցել հայոց հավատի, եկեղեցու, հոգևոր գործիչների հանդեպ: Նրա երգերում քանիցս դրսևորվել է այդ վերաբերմունքը: Խրիմյան Հայրիկին նվիրված երգերում նա հայ հասարակական լայն շրջաններում ընդունված կարծիքի հետևողությամբ հույսեր է կապել հայրենասեր, հայրենանվեր կաթողիկոսի կրթական, եկեղեցական, նաև ազգային-քաղաքական գործունեության հետ:

13. Զիվանի-բանաստեղծն իր պատկերացումն ունի ժամանակի և աշուղ-երգչի, մանավանդ հայ աշուղի մասին: Նա դժբախտ է համարում այն ժողովրդին, որ երգիչ չունի: Հայ աշուղը ուրախ երգեր չի հորինում ազգի, իր ժողովրդի կյանքի դժվարագույն պայմանների պատճառով:

14. Իր երգերում՝ աշուղը երազում էր մարդկանց եղբայրության, հավասարության մասին՝ ո՛չ տեր լինել, ո՛չ ծառա: Նա գիտակցում էր հնի ու նորի փոխհարաբերության՝ հնի անցողիկության ու նորի անխուսափելի գալստյան մասին: Զիվանին հասկանալով նորի առավելությունը, գիտակցում էր նաև այն բացասական երևույթները, որ բերում էր այն, հատկապես շեշտելով սոցիալական անհավասարությունը հասարակության մեջ:

15. Զիվանու ժառանգության մեջ զգալի տեղ են գրավում բարոյախրատական, սիրո ու գեղեցկության թեմաները: Նա՝ հավատարիմ մնալով աշուղական երգին բնորոշ ավանդական թեմաներին, մոտիվներին, հարստացրեց դրանք նոր ժամանակին հարիր թեմաներով:

16. Գեղեցիկի, սիրունի գովքը Զիվանու երգերում հնչում է յուրովի: Նրա սիրունների արտաքին բարեմասնությունները համահունչ են ներքին բարոյական արժանիքներին. աշուղի պատկերասրահում գեղեցկուհիները հայուհիներ են և կրում են հայկական անուններ:

17. Աշուղը հավասար վարպետությամբ և հայերենի մակդիրների, լեզվաարտահայտչական միջոցների հմուտ կիրառությամբ է ներկայացնում թե փոխադարձ սիրո վայելքը, թե սպասումի, բաժանման ու անջատման դառնությունը, վիշտն ու տվայտանքը: Աշուղ-բանաստեղծը բոլոր դեպքերում հենվում է քրիստոնեական բարոյականության ազգային չափանիշների վրա:

18. Զիվանին հավատարիմ է եղել աշուղական երգի այն կարևոր յուրահատկությանը, որ մի շարք մոտիվներ հաճախ հանդես են գալիս միահյուսված հայրենասիրական, սիրո, դավանանքին առնչվող թեմաներին և դժվար է դրանք զատել միմյանցից:

19. Աշուղն իր ստեղծագործություններում կարևորում և գովերգում է մարդկային արժանիքները. ընկերասիրությունը, համեստությունը, հավատարմությունը և այլն: Մասնավորապես, հատուկ վերաբերմունք է արտահայտում հավատարմության հանդեպ: Զիվանու նշանավոր «Ընկեր» երգ-բանաստեղծությունը չի իջնում հայ ժողովրդի լայն խավերի շուրթերից:

20. Հայ աշուղական բանաստեղծության լեզվի լիովին հայկականացումից հետո Զիվանուն վիճակված էր կատարելու ևս մեկ կարևոր գործ՝ արևելյան սիրավեպերի հայերենի փոխադրումը և երգվող հատվածների հայերեն դարձնելը: 19-րդ դարավերջից այս աշխատանքը դառնում է գրական մի շարժում, որին մասնակցում են ժամանակի մյուս աշուղները ևս:

21. 1850-ական թվականներից արևելյան մի շարք սիրավեպերի և աշուղական պատմվող հեքիաթների հայացումը միայն ազգային ինքնագիտակցության վերելքով և ժողովրդի սիրված ստեղծագործությունները հայերենով ներկայացնելու ձգտմամբ չէ, որ պայմանավորված էր: Գրական այս շարժումը կարելի է անվանել նաև «Դարձ ի շրջանս իւր», քանի որ հիշյալ

ստեղծագործությունները իրենց ակունքում նաև հայկական հիմքեր են ունեցել և պատմական աննպաստ պայմանների պատճառով հայերեն գուսանական երգերին ուշ միջնադարում փոխարինած աշուղական՝ աստիճանաբար թուրքերենով ասվող երգերում է, որ հայերեն նախօրինակները թուրքերենով են դարձել:

ՑԱԼԿ ՏՊԱԳՐՎԱԾ ԳՐՔԵՐԻ ԵՎ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ

1. Աշուղ Ջիվանու բանաստեղծական աշխարհը, մենագրություն, Երևան «Առասպել» հրտ. 2013, 272 էջ:
2. Աշուղ Ջիվանի, Անհայտ երգեր, Աշխատասիր. Թ. Պողոսյանի, խմբ.՝ Ա. Ղազիյան, Երևան, «Լուսակն» հրտ., 2009, 672 էջ:
3. Ջիվանու պանդխտության, գաղթի, հավատքի, իրավիճակի, զինվորի երգերը, «Երաժշտական Հայաստան», 2005, հ.3/18/, էջ 63-65;
4. Պատմա-հայրենասիրական մոտիվները Ջիվանու անտիպ երգերում, «Երաժշտական Հայաստան», 2005, հ. 2/17/, էջ 26-29:
5. Ջիվանին Ալեքսանդրապոլի Վարպետաց վարպետ /Ջիվանի 1846-1909/, «Երաժշտական Հայաստան», Երևան, հ. 4/31/2008-1 /32/ 2009, էջ 28-31:
6. Ջիվանու գործունեությունը Թիֆլիսում /Ջիվանի 1846-1909/, «Երաժշտական Հայաստան». Երևան, հ.4/31/2008-1/32/2009, էջ 32-35:
7. Պանդխտության, Եղեռնի, գաղթի, զինվորության մոտիվները Ջիվանու անտիպ երգերում, «Երաժշտական Հայաստան», Երևան, հ. 2/33/2009, էջ 29-33:
8. Ջիվանի /կենսագրական ակնարկ/, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2012, հ.1/189/, էջ 67-79:
9. Հայ աշուղական երգարվեստը 19-րդ դարում և Ջիվանին, «Բազին», Բեյրութ, 2012, հ.1, էջ 32-41:
10. Ջիվանու որպես աղոթք գրված ստեղծագործությունները, «Բազմավեպ», Վենետիկ, 2013, հ. 3-4, էջ 171-181:
11. Ջիվանին և Աստվածաշունչը, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2013, հ. Ը, էջ 33-41:
12. Աստծո ընկալումը Ջիվանու ստեղծագործություններում, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2013, հ. Ժ, էջ 52-60:
13. Հայ ազատագրական պայքարն ու ինքնապաշտպանական մարտերը աշուղ Ջիվանու երգերում, «Վեմ», Երևան, 2013, հ. 3/43/, էջ 123-138:

- 14.Ժողովրդական առակների ջիվանիական մեկնաբանությունները, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2013, հ.3 /194/, էջ 94-102:
- 15.Առածների Ջիվանու գրական մշակումները, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2014, հ.2 /641/, էջ 180-189:
- 16.Ջիվանու ստեղծագործության կենսագրական ակունքները, «Երաժշտական Հայաստան», Երևան, 2013, հ.1-2 /44-45/, էջ 157-160:
- 17.Հայկական հարցի՝ Ջիվանու մեկնաբանությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2015, հ.1/643/, էջ 124-133:
- 18.Compositions by Jivani on social subjects «Բանբեր հայագիտության», Երևան, 2016 հ. 1,(10), էջ 183 – 191:

ПОГОСЯН ТОВМАС ГЕВОРКОВИЧ ПОЭТИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ ДЖИВАНИ

Диссертация на соискание ученой степени доктора филологических наук по специальности 10.01.01-"Армянская классическая литература". Защита состоится 23 декабря 2016г. в 12:30 на заседании специализированного совета 003 "Литературоведения" ВАК РА действующего в институте литературы имени М. Абегайна НАН РА по адресу ул. Г. Лусаворича 15, г. Ереван.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению литературного наследия знаменитого армянского ашуга-народного певца Дживани (1846-1909гг.). В работе выявляется связь Дживани с армянской ашугской поэзией предыдущего периода, а также его влияние на авторов последующего периода.

Главной целью диссертации явилось выявление всех тем, встречающихся в его произведениях и представление его литературного наследия во всем тематическом разнообразии.

Дживани не писал стихотворных рядов. Он не примыкал ни к одному литературному направлению своего времени и каждое произведение сочинял как ашугскую песню. Дживани не претерпел также значительных изменений в мировоззрении и творческом мастерстве. По этой причине было бы неправильно представить его произведения по хронологическому принципу. Единственным способом анализировать его творчество было сгруппирование и представление стихов ашуга по тематическому принципу, что и было сделано в диссертации.

Разделение диссертации на главы и подразделение последних было проведено в соответствии с тематическими группами стихов Дживани.

Диссертация состоит из введения, семи глав, выводов, списка использованной литературы и таблицы-приложения.

Во введении представлена история армянской ашугской поэзии с соответствующей периодизацией и историческими центрами развития. Подчеркивается то новое, что было привнесено ашугом Дживани в развитие армянской ашугской поэзии. Освящаются также имеющаяся литература по теме изучаемого вопроса, цель, новизна и структура диссертации.

Первая глава / "Творческая деятельность Дживани" / состоит из двух подглав. Первый раздел посвящен выявлению связи между событиями жизни ашуга и его стихами, Отмечается, что упоминания о разных жизненных событиях в его песнях помогают сделать целостной биографию поэта и уточнить число его произведений.

Важную часть литературного наследия Дживани составляют не вошедшие в его изданные сборники произведения, которые были собраны и изданы нами отдельным томом. Оценке этих-ранее не опубликованных стихов, посвящен второй раздел данной главы работы.

Вторая / "Историко-патриотические мотивы в песнях Дживани" / глава состоит из трех разделов, в которых представлены произведения Дживани на исторические темы- о важных и героических событиях истории армянского народа. В своих стихах ашуг затрагивает темы, связанные с

Армянским вопросом, особенно вдохновенно после Берлинского конгресса. В работе анализируется, как Дживани представлял решение этого вопроса и с помощью каких поэтически-аллегорических приемов он выражал это. Приведены также те произведения, в которых ашуг подчеркивает важность национального единства армянского народа, как обязательное условие в решении разных национальных задач.

Третья / "Певец национально-освободительных и самооборонных сражений" / глава состоит из двух подразделов.

Первый раздел посвящен произведениям о фидаинском движении конца 19-го века. Дживани прославляет определенные исторические события и сражения посвящая отдельные стихи народному герою Андранику и другим фидаинам. Вторая часть главы касается межнациональных столкновений 1905-1907 гг. в Закавказье. Языком стихотворения Дживани воспевает героев-добровольцев самообороны народа, описывает поджог армянских селений вероломными соседями. От пристального взгляда поэта не ускользнул тот факт, что царские власти не предприняли никаких попыток предупредить столкновения.

Четвертая / "Поэтическое отражение жизни и действительности" / глава состоит из двух подразделов. В первом разделе анализируются стихи Дживани, в которых отражены общественные и социально-экономические отношения того времени. Дживани описывает тяжелое положение неимущего сословия, бьет тревогу о будущем армянского народа. В втором разделе анализируются, написанные на эти темы произведения ашуга, в рамках моральных понятий Дживани. Подчеркивается, что эти произведения являются выражением философских воззрений автора. В песнях, посвященных вину, женщине и любви, Дживани, оставаясь верным традиционным мотивам ашугской песни, обогатил последнюю характерными для поэтического мышления нового времени темами.

В пятой / "Духовно-религиозные песни Дживани" / главе выявлен библейский пласт произведений Дживани, анализируются также стихи на церковно-религиозные темы. Следует отметить, что большая часть написанных на эти темы стихов, в том числе и стихи в виде молитвы-просьбы, имеют национальное звучание. Опираясь на традицию, берущую начало от средневековой литературы, в ряде случаев Дживани строит свою мысль используя библейские строки, образы и понятия. Характерный для ашугской поэзии назидательный стиль благодаря подобным цитатам из Святого Писания, становится более обоснованным и веским.

Шестая / "Назидание в произведениях Дживани" / глава посвящена тем стихам ашуга, в которых наставление в поэтическом слове основано на пословицах и баснях. Произведения этих жанров народного фольклора основаны на заключении, сделанном на приводимом примере.

Седьмая глава, озаглавленная "Литературные переложения ашугом Дживани восточных любовных романов", состоит из двух разделов и посвящена литературным обработкам Дживани восточных любовных романов.

В первом разделе проведен сравнительный анализ литературного переложения Дживани "Ашуга Гариба", армянского и восточного вариантов

данного литературного памятника и знаменитого произведения М. Ю. Лермонтова “Ашик-Кериб”.

Во втором разделе проанализирован восточный любовный роман “Асли и Кярам” в сравнении с армянским и восточным вариантами.

Для каждого сюжетного эпизода двух вышеназванных романов, показан к какому из вариантов обращался Дживани и как интерпретировал его.

В таблице-приложении в алфавитном порядке по первой строке, приведены дошедшие до нас 1194 песни Дживани. Отмечается в каком- рукописном или напечатанном источнике данное произведение дошло до нас.

Выводы- выйдя за традиционные рамки восточной ашугской поэзии, Дживани привнес новые темы, созвучные поэтическому мышлению и мировоззрению нового времени. Он выступал не только как ашуг-певец любви и морально-назидательной тематики, но и как публицист, учитель и певец национально-освободительной борьбы.

**TOVMAS GEVORG POGHOSYAN
JIVANEE'S POETICAL HERITAGE**

**Dissertation to obtain the degree of Doctor of Philosophy in the field
of classical Literature 10.01.01**

**Defense day: December 23, 2016, 12:30 pm at the "Literature"
Specialized Council 003 under M. Abeghyan Literature Institute of the National
Academy of Sciences of the Republic of Armenia
Address: Yerevan, 15 G. Lusavorich str.**

RESUME

The work is dedicated to the literary legacy of famous singer and ashough (troubadour) Jivanee (1846-1909). The thesis shows Jivanee's connection to the ashoughs' poetry of the foregoing period, as well as his influence on the authors of the following era.

The primary aim of the thesis is to disclose all the motives existing in Jivanee's works and to present his literary heritage in its thematic variety.

Jivanee neither had poetry series nor was the follower of literary schools of the time. He created any of his works as an ashough song. Jivanee was not subject to obvious changes in his outlook and literary mastery, either. For this reason, it would be right to present his works according to the periods of their creation.

Thus, the only way to analyze his works is to group them and present according to thematic divisions, and this is just what the thesis presents. The division of the work into chapters and the inner division of the latter are made according to respective theme groupings that exist in Jivanee's works.

The thesis is comprised of the introduction, seven chapters, conclusion, bibliography and table-appendix.

Introduction presents the history of ashough poetry, respective periodization and centers of the time. Novelties introduced by Jivanee in Armenian ashough poetry are highlighted. It also presents the bibliography on the analyzed issue, the aim of the thesis, the innovation it introduces and its structure.

The first chapter entitled "Jivanee's Folk-Ashough Activity" is comprised of two sub-divisions. The first part is dedicated to the connection of his life to his works: how different incidents of his life are reflected in his works. It is stated that recollections, which mention him help to complete his biography and clarify the exact date of his works.

Works that have been left out of the printed selections of works by Jivanee occupy an important place in his literary heritage. They are published in a separate book. The second part of this chapter is dedicated to the evaluation of these works.

The second chapter entitled "Historical-Patriotic Motives in Jivanee's Songs" is comprised of three parts, which are dedicated to Jivanee's works with

crucial and heroic motives. They also poetically reflect on the Armenian issue: how he imagined the solution of the Armenian issue in enthusiastic conditions that followed the Congress of Berlin and which poetical allegories he used to present the ways of solving that issue. Also the works are listed, in which the ashough highlights the national unity of the Armenians as an important prerequisite for solving different national problems.

The third chapter entitled “Singer of National Liberation and Self Defensive Wars” is comprised of two sub-divisions. The first part is dedicated to works related to the Armenian Fedayeen movement at the end of the 19th century. Jivanev praised some historical events and battles by dedicating separate poems to national hero Andranik and Fedayeen. The second part refers to the inter-ethnic conflicts that took place in Transcaucasia in 1905-1907. Jivanev again in poetic language presents heroes that struggled for the self-defense of the nation, as well as the burning of different Armenian localities by traitor neighbors. The poet could not, but mention that tsarist authorities did not even try to prevent the conflicts.

The fourth chapter entitled “Time and Ashough” is comprised of two sub-divisions. The first part is dedicated to the reflection of communal and social-economic relations of the time in Jivanev’s works. Most of the works with this motive depict the tough condition of the poor. The next large group includes poems related to the themes of national anxieties of the time. In the second part analyzes works with these themes in the framework of Jivanev’s exhortative and moral perceptions. It highlights the idea that works with these themes are a part of the author’s philosophy of life. Jivanev, remaining loyal to traditional motives peculiar to ashoughs’ songs, enriched the works dedicated to women, wine and love with respective themes characteristic to the poetic mentality of the new period.

The fifth chapter entitled “Jivanev’s Spiritual-Religious Songs” shows the biblical layer in Jivanev’s works, defining also poems with religious-ecclesiastical motives. It is noteworthy that a great part of works with these motives, including prayer-supplications, have national resonance. According to the tradition deriving from medieval literature, in a number of cases Jivanev bases his works on biblical thoughts, words and images. Exhortation style peculiar to the ashoughs’ literature becomes more impressive and affirmative through quotations from the Holy Bible.

The sixth chapter entitled “Exhortations in Jivanev’s Works” analyzes those works of Jivanev, in which poetic exhortations are based on proverbs and parables. Works of these folklore genres are created as proverbs or parables based on the conclusion one can make of the given example.

Seventh – the chapter entitled “Refinement of Eastern Romances by Jivani” is comprised of two sections.

The first section refers to the literary refinement by Jivani entitled “Troubadour Gharib” and to the Armenian and Eastern versions of this romance, as well as to the comparative analysis of Lermontov’s famous work “Ашик-Кериб”,

The second section analyses the romance “Asli and Kerem” through the comparative analysis of the Armenian and Eastern versions.

In both cases, it shows what version Jivani used in each story episode and how he commented it.

The **table-appendix** presents Jivanev’s 1194 songs in alphabetical order of their initial verses and mentions their manuscript and printed sources.

Conclusion – Jivanev went beyond the framework of oriental traditional rules of ashoughs’ songs and embraced new themes in harmony with poetic mentality and outlook of the new period. He acted not only as an ashough of love, morality and exhortation, but also as a publicist, teacher and a singer of national liberation struggle.

A handwritten signature in black ink, appearing to read "B. Jivanev". The signature is stylized and cursive, with a large, sweeping flourish at the end.

